ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեմա՝** ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերը ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների համատեքստում (1946-1991 թթ.)

**Հետազոտող ուսուցիչ՝** Էդգար Նավոյան

Երևանի N 37 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... 3

ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումենի վարչակազմի հայեցակարգային արտաքին քաղաքականությունը և ԽՍՀՄ-ը (1945-1953 թթ.) ..... 7

Աշխարհքաղաքականությունը որպես ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունների բաժանարար ..... 17

ԱՄՆ-ի նախագահ Դ. Էյզենհաուերի և նրան հաջորդած վարչակազմների հայեցակարգային արտաքին քաղաքականությունը ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում ..... 19

(1950-1960-ական թթ.) ..... 19

ԱՄՆ-ի նախագահներ Ջ. Քարթերի և Ռ. Ռեյգանի վարչակազմների հայեցակարգային արտաքին քաղաքականությունը և ԽՍՀՄ-ի փլուզումը (1980-1991 թթ.) ..... 23

Եզրակացություն ..... 32

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ ..... 39

# ԱՄՆ-ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ ԽՍՀՄ-ի ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1946-1991 ԹԹ.)

## Ներածություն*

**Թեմայի արդիականությունը:** 1945-1991 թթ. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության և դրանով, իսկ «սառը պատերազմի», ու նրա առանձին դրվագների վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ ստվարածավալ և բազմահատոր աշխատություններ և ուսումնասիրություններ: Դրանց անբաժանելի մաս են հանդիսացել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերը (դոկտրինները), որոնք հետազոտության են ենթարկվել ինչպես ամբողջական, այնպես էլ առանձին ուսումնասիրությունների տեսքով: Այս և զուգահեռ հարցադրումների վերաբերյալ գիտական հետաքրքրությունը, բավական բարձր է: Քանզի ԽՍՀՄ-ի փլուզմամբ ավարտված համարվող սառը պատերազմը մեկ և կես տասնամյակ անց նորից սկզբնավորվեց, սակայն այս անգամ նոր պայմաններում: Կրկին սրված են Արևմուտքի (ԱՄՆ-Եվրամիություն) և ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) փոխհարաբերությունները: Ռուսաստանի ավտորիտար համակարգը, Ռուս-ուկրաինական պատերազմը (2014, 2022 թթ.), Արևմուտքի պատժամիջոցները, միջուկային սպառնալիքը և աշխարհաքաղաքական ուժերի վերադասավորման գործընթացը առավել քան երբևէ արդիական է դարձնում սառը պատերազմի ու նրանում ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ (ՌԴ) փոխհարաբերությունների վերաիմաստավորումն ու արդի ժամանակաշրջանի իրադարձությունների հավանական կանխատեսումները:

**Հետազոտության խնդիրը և նպատակը:** Հետազոտության նպատակը սառը պատերազմի պայմաններում ԽՍՀՄ-ի ու նրա գլխավորած սոցալիստական համակարգի դեմ ուղղված ԱՄՆ-ի հայեցակարգային արտաքին քաղաքականության ծրագրավորված քայլերի, միջոցառումների ու հարակից հարցերի վերլուծությունն է, որ սկիզբ է առնում «զսպման» ու «Թրումենի հայեցակարգից» ու ավարտվում «Ռեյգանի հայեցակարգով»: Խնդիր է դրվել հիմնավորել՝

* Համաձայն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի» այս թեմայից օգտվելուց կամ քաղվածքներ կատարելուց հեղինակի՝ է. Նավոյանի անունը և գիտական հոդվածի վերնագրի նշումը՝ հղումը, պարտադիր է:

- Սառը պատերազմում ԱՄՆ (Արևմուտք)-ԽՍՀՄ-ի պայքարը ուներ ոչ միայն կապիտալիստական ու սոցալիստական հասարակարգերի անհամատեղելիության պատճառ, այլև առավել խորը պատմականորեն ձևավորված աշխարհաքաղաքական բնույթ, որտեղ ԽՍՀՄ-ը անմիջականորեն դիտվել է ԱՄՆ-ի բնական հակառակորդը:
- ԱՄՆ-ի ծրագրավորված, սցենարային-հայեցակարգային արտաքին քաղաքականությամբ միտված էր զսպել, հետ մղել ԽՍՀՄ-ի գլխավորած սոցիալիստական ճամբարի երկրների ընդլայնումն և ի վերջո փլուզել այն:
- ԽՍՀՄ-ը հայեցակարգային քաղաքականության տեսանկյունից դրսևորել է որոշակի կրավորական քաղաքականություն և այդ տեսանկյունից Արևմուտքին (հատկապես ԱՄՆ-ին) հիմնականում հակադրվել է այսպես կոչված «Բրեժնևի հայեցակարգով»:
- ԽՍՀՄ-ի փլուզումն առավելապես եղել է ներքին գործընթացների ու ճգնաժամերի արդյունք, սակայն արտաքին քաղաքականության մեջ անառարկելի է եղել նաև ԱՄՆ-ի հայեցակարգային՝ դոկտրինալ քաղաքականության դերը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության հիմքում ընկած են ժամանակակից պատմագիտության և քաղաքագիտության մեջ կիրառվող հետազոտական մոտեցումներն ու մեթոդները, որոնցից կարելի է առանձնացնել պատմականությանը, հաջորդականությունը, համակարգային մեթոդը, պատմահամեմատական և փոխկապակցման (կոռելակցիոն), քննադատական-վերլուծական մոտեցումները և այլն:

**Հետազոտության ժամանակագրությունը:** Ժամանակագրական առումով ընդգրկել է սառը պատերազմի ժամանակաշրջանը՝ 1945/46-1991թթ.: Ենթագլուխներին տրված վերնագրերը և ժամանակային տարաանջատումները որոշակիորեն պայմանական են՝ պայմանավորված տեղնիկական պահանջների հետ:

**Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը:** Սառը պատերազմի, ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունների և նրանում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ու հարակից հարցերի վերաբերյալ առկա են բազմաթիվ աշխատություններ և հոդվածներ, որոնք լույս են տեսել ու տեսնում ԱՄՆ-ում, Եվրոպայում, ԽՍՀՄ-ում (ՌԴ) և այլուր: Սակայն տվյալ ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ուսումնասիրությունը, նրանց

օրգանական հաջորդականությունն ու սցենարային կապը նոր վերահմաստավորում են պահանջում:

Հետազոտության համար, որպես սկզբնաղբյուրներ են ծառայել անգլերեն և ռուսերեն տպագրված վավերագրերը, փաստաթղթերը, որոնք թվայնացվել են և առկա են համացանցում, քաղաքական գործիչների ելույթները լրագրողներին տված հարցազրույցները, ինչպիսիք են՝ Հ. Թրումենի ելույթը («Թրումենի հայեցակարգ») ԱՄՆ-ի կոնգրեսում, Ջ. Մարշալի ելույթը Հարվարդի համալսարանում («Մարշալի պլանը»), Ջ. Քենանի «Երկար նամակը», Ամերիկյան նախագահներ Դ. էյզենհաուերի, Ջ. Քարթերի Ռ. Ռեյգանի հայեցակարգերը, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության և դիվանագիտական հարաբերություններին վերաբերող տարբեր ժամանակներում հրատարակված դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուները և այլն[1]:

Հետազոտությունում առկա են խորհրդային շրջանում սառը պատերազմի տարբեր դեպքերին և իրադարձություններին նվիրված աշխատությունները:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերը ներկայացված է անգլո-ամերիկյան և ամերիկյան աշխարհաքաղաքական գաղափարախոսության ու ընդհանրության տեսանկյունից և ցույց է տրված վերջիններիս ազդեցությունը այդ հայեցակարգերի վրա: Հատկապես մեծ կարևորություն են ներկայացնում Ա. Մեխենի, Հ. Մակքինդերի, Ն. Սպայկմենի, Ս. Կոենի, Ջ. Քենանի, Հ. Քիսինջերի, Զ. Բժեզինսկու, Ս.

---

[1] Foreign relations of the United States 1977–1980 (ed. Howard A. M., Ahlberg K. L.). Foundations of Foreign Policy, V. I, Washington: US GPO, 2014; Public Papers of the Presidents of The United States. Harry S. Truman: Containing the Public Messages, Speeches, and Statements of the President, January 1 to December 31, I947, Washington: USGPO, I963; Public papers of the presidents of the US Dwight D. Eisenhower (by D. Eisenhower), Containing the Public Messages, Speeches and Statements of the President, January 1 to December 31, 1957, Washington, US GPO, 1957; Public Law 85-7 Joint resolution to promote peace and stability in the Middle East. 117 (85th). Mar 9, 1957 // https://www.govtrack.us/congress/bills/85/hjres117/text; Ronald Reagan: Public Papers of The Presidents of the United States, book 1, January 1 to june 28, 1985, Washington: USGPO, 1988; 'The sources of Soviet conduct' from Foreign Affairs (July 1947) p. 6-10 // https://www.cvce.eu/content/publication/1999/1/1/a0f03730-dde8-4f06-a6ed-d740770dc423/publishable_en.pdf; The "Marshall Plan" speech at Harvard University, 5 June 1947 // http://www.oecd.org/general/themarshallplanspeechatharvarduniversity5june1947.htm;
Беседы с Бушем. Мальта, 2 декабря 1989 г. // Отвечая на вызов времени. Внешняя политика перестройки: документальные свидетельства, 1989. Брежнев Л. И. Ленинским курсом, т. II. М.: Политическая литература, 1970; Внешняя политика США. Хрестоматия (сост. Д. В. Кузнецов), Благовещенск: БГПУ, 2014; Внешняя политика Советского Союза, 1948 год: Документы и материалы. ч. 1, М.: Госполитиздат, 1950; Внешняя политика Советского Союза, 1947 год: Документы и материалы, ч. 2, М.: Госполитиздат, 1952; Телеграмма посла СССР в США Н. В. Новикова министру иностранных дел СССР В. М. Молотову от 9 июня 1947 г. // Международная жизнь. 1992, № 5.

Հանթինգտոնի, իսկ ռուս հեղինակներից՝ Ա. Դուգինի, Ա. Ուտկինի, և այլոց աշխատությունները[2]:

Կարևոր են համարվում «սառը պատերազմի» ժամանակաշրջանի ամերիկյան և խորհրդային քաղաքական, դիվանագիտական, զինվորական գործիչների հիշողություններն ու ինքնակենսագրությունները:

Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև ամերիկյան, խորհրդային (ՌԴ), ԱՊՀ երկրների, արևմտյան պարբերական մամուլը և համացանցում զետեղված նյութերն ու հոդվածները, որոնք այս կամ այլ կերպ անդրադառնում են հետազոտության թեմային վերաբերող հարցերին:

[2] Mackinder J. H. Democratic Ideals and Reality, Washington: NDU, 1996; Spykman N. America's Strategy in World Politics: The United States and the Balance of Power, N.Y., Harcourt, Brace and Company, 1942; Мэхэн А. Влияние морской силы на историю 1660-1783, М.: АСТ, 2002; Киссинджер Г. Дипломатия, (пер. В. В. Верченко), М.: АСТ, 2018; Бжезинский З. Великая шахматная доска: Америка и его геостратегические императивы, М.: ИМО, 2005; Дугин А. «Геополитика России», М.: Академический проект, 2012; Уткин А. И. Мировая холодная война, М.: Эксмо, 2005.

## ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումենի վարչակազմի հայեցակարգային արտաքին քաղաքականությունը և ԽՍՀՄ-ը (1945-1953 թթ.)

Երկրորդ աշխարհամարտից հետո զգալիորեն մեծացավ ԽՍՀՄ-ի միջազգային հեղինակությունը: ԱՄՆ-ի հետ միասին նա դարձավ ՄԱԿ-ի հիմնադիրներից և Անվտանգության խորհրդի հիմնական անդամներից մեկը: ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության շահերը հակադրվում էին Երկրորդ աշխարհամարտում իր դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրտանիայի աշխարհաքաղաքական շահերին և կողմերի միջև բախումը դարձնում էին անխուսափելի: Երկրորդ աշխարամարտում ԽՍՀՄ-ի կողմից ֆաշիստներից ազատագրված երկրներում՝ Հարավսլավիայում, Ալբանիայում, Բուլղարիայում Ռումինիայում ձևավորվեցին խորհրդամետ վարչակարգեր, իսկ Ֆրանսիայում, Իտալիայում, Հունաստանում և այլ երկրներում կոմունիստական և սոցիալիստական շարժումները մեծ թափ հավաքեցին ու հավանականություն կար, որ այդտեղ էլ կհաստատվեն սոցիալիստական վարչակարգեր: Դրանով ԽՍՀՄ-ը նպատակ էր հետապնդում իր համար ստեղծել ազդեցության և անվտանգության գոտի: Խորհրդային կոմունիզմի փորձի և օգնության վրա առավել մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Ասիայի ու Աֆրիկայի երկրները, որոնք պայքարում էին անկախության համար և հույս ունեին ԽՍՀՄ-ի պես առաջ անցնել Արևմուտքից: Արդյունքում Խորհրդային Միության ազդեցության գոտին զգալիորեն մեծացավ, ինչն առաջ բերեց Արևմուտքի պետությունների և հատկապես ԱՄՆ-ի խոր անհանգստությունը:

1946 թ. մարտի 5-ի Ու. Չերչիլի ֆուլտոնյան ելույթով պաշտոնապես սկիզբ առավ սառը պատերազմը, որտեղ նա կոչ արեց ստեղծել Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ռազմաքաղաքական դաշինքը՝ ընդդեմ ԽՍՀՄ-ի ծավալապաշտության[3]: Ըստ նրա «երկաթե վարագույրն» իջել է Եվրոպայի կեսի վրա, որտեղ տարածվում է ռուսների տիրապետությունը՝ «Շտետինից մինչև Բալթիկա և Տրիեստից մինչև Ադրիատիկ»: Հենց սա էլ համարվեց «սառը պատերազմի» պաշտոնական մեկնարկը: Չերչիլը նույնիսկ առաջարկում էր ԽՍՀՄ-ի դեմ օգտագործել ամերիկյան ատոմային զենք[4]: Առաջ քաշվեց «ազատ աշխարհի» գաղափարը, որի տակ հասկացվում էր Արևմուտքը՝ ի հակադրումն խորհրդային խմբավորման: Վերջինս ԱՄՆ-ի և Արևմուտքի երկրների կողմից դիտվում էր

---

[3] **Романова Е. В., Капитонова Н. К.** История внешней политики Великобритании. М. ‚Международные отношения‘, 2020, с. 449-450.

[4] **Չելեպի Է.,** Չերչիլի գաղտնիքը, Ե., «Հայաստան», 1977, էջ 293: Киссинджер Г. Дипломатия, (пер. В. В. Верченко), М.: АСТ, 2018. с. 427-428.

«բռնակալական աշխարհ»: Առճակատումը և սառը պատերազմը ընթանում էր, ոչ միայն անմիջականորեն ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի, այլև կապիտալիստական ու սոցիալիստական համակարգերի միջև: Դա անխուսափելիորեն հանգեցրեց ռազմաքաղաքական խմբավորումների առաջացմանը: Սառը պատերազմը ընդգրկեց Արևելքի և Արևմուտքի կյանքի բոլոր բնագավառները՝ ներքին և արտաքին քաղաքականությունը, գաղափարախոսությունը, տնտեսությունը, մշակույթը, որը հարուցեց սպառազինության անզուսպ մրցավազք: Սառը պատերազմին էր նպատակամղված «ատոմային դիվանագիտությունը», «դոլարի դիվանագիտություն»[5] և այլն: Նպատակը Յալթայում և Պոտսդամում ձեռք բերված համաձայնությունների ու պայմանագրերի վերանայումն էր:

Սառը պատերազմի ձևավորման գաղափարական հիմքում հատկապես կարևոր նշանակություն ունեցավ ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակից (1952 թ. ԽՍՀՄ-ում ԱՄՆ-ի դեսպան), Ջ. Քենանի «երկար նամակը», որ նա 1946 թ. փետրվարի 22-ին Մոսկվայից ուղարկեց Վաշինգտոն: Նա կոչ էր անում ԱՄՆ-ի կառավարությանը տևական, համբերատար, բայց հաստատուն ու զգոն կերպով զսպել խորհրդային ծավալապաշտական ձգտումները և նրան քաղաքական ասպարեզում համարել թշնամի, այլ ոչ թե գործընկեր: Այստեղ շարադրված էր ԽՍՀՄ-ի «զսպման» և «հետմղման» ռազմավարությունը և կանխատեսվում էր խորհրդային համակարգի փլուզումը: Ջ. Քենանի «Երկար նամակը» շատ կողմերով կողմնորոշիչ եղավ ԽՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ի հարաբերություններում[6] և բարձրացվեց հայեցակարգի աստիճանի[*]: Այսպես ուրվագծվեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը, այն է թուլացնել ԽՍՀՄ-ը և հնարավորության դեպքում այն փլուզել: Այս մոտեցմամբ ԱՄՆ-ը, որպես գերհզոր տերություն, բնականաբար, խնդիր ուներ միջազգային ասպարեզում հաստատել իր մենիշխանությունը:

Այստեղ կարևոր ենք համարում տալ արտաքին քաղաքականության հայեցակարգ (դոկտրինա) հասկացողության ձևակերպումը՝ *Արտաքին քաղաքականության հայեցակարգը պետության նպատակների, մտադրությունների ու գործողությունների*

---

[5] «Դոլարի դիվանագիտություն» մասին տե՛ս **Նավոյան Է.,** «Մարշալի պլանը» և «դոլարային դիվանագիտությունը», «Լրատու», Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2013, թիվ 1 (14), էջ 71-81:

[6] 'The sources of Soviet conduct' from Foreign Affairs (July 1947) p. 6-10 // https://www.cvce.eu/content/publication/1999/1/1/a0f03730-dde8-4f06-a6ed-d740770dc423/publishable_en.pdf; **Кеннан Дж.,** Дипломатия Второй мировой войны: глазами американского посла в СССР Джорджа Кеннана (пер. с англ. Л.А. Игоревского, Ю.Д. Чупрова), М.: Центрполиграф, 2002. с. 249-263; Տե՛ս նաև **Киссинджер Г.** Дипломатия, (пер. В. В. Верченко), М.: АСТ, 2018. с. 40, 430-436, 456-478.

[*] 1951 թ. Ջ. Քենանը, կանխատեսելով ԽՍՀՄ-ի փլուզումը, գրել է, որ եթե խորհրդային համակարգի փլուզումը տեղի ունենա, այն կլինի, ոչ թե արտաքին, այլ ներքին գործընթացի արդյունք (**Кеннан Дж. Ф.** ,Америка и русское будущеет / Новая и новейшая история, 2001, №3, с. 83-95):

*միասնական համակարգ է, ռազմավարություն, որ էականորեն հստակեցնում է երկրի շահերի պաշտպանությունը կամ արտաքին քաղաքականության ուղեգիծը միջազգային ու միջպետական հարաբերություններում:*

ԽՍՀՄ-ը և նրա գլխավորությամբ առաջնորդվող սոցիալիստական երկրների խումբը (ճամբարը) որդեգրել էր մի գաղափարախոսություն, որը մերժում էր կապիտալիստական արժեհամակարգը և հաջողության դեպքում, ինչպես նշել են մարքսիզմի հիմնադիրները, կարող էր դառնալ կապիտալիզմի գերեզմանափոսը: Մինչև Երկրորդ աշխահրամարտը, որպես կանոն, ԱՄՆ-ը կարևորում էր ԽՍՀՄ-ի դեմ պայքարը, սակայն պատերազմից հետո միջազգային ասպարեզում բարձրացավ ԽՍՀՄ-ի հեղինակությունը, իսկ միջուկային զենքի տիրապետման հետ այն ռազմական առումով դարձավ գերտերություն, ուստի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գործունեությունն առաջին հերթին ուղղված էր ԽՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների թուլացմանը և ի վերջո վերացմանը: Այստեղ, անկախ ԱՄՆ-ի իշխող վարչակարգից կամ քաղաքական պատկանելիությունից (հանրապետական կամ դեմոկրատ), արտաքին քաղաքականության հայեցակարգերի գրեթե բոլոր մշակված փաստաթղթերում դրվում էր ԽՍՀՄ-ի ազդեցության տարածումը զսպելու և խորհրդային համակարգը փլուզելու խնդիրը, ընդորում ներառվում էին բոլոր հնարավոր ոլորտները՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային և այլն:

1947 թ. մարտի 12-ին, հրապարակվեց «զսպման» հայեցակարգի ընդհանուր ռազմավարությունից բխող «Թրումենի հայեցակարգը», որով ԱՄՆ-ը պետք է Հունաստանին և Թուրքիային տրամադրեր 400 մլն դոլարի չափով ռազմական և տնտեսական օգնություն: Իր ելույթում ԱՄՆ նախագահ Հ. Թրումենը (1945-1953 թթ.) հետևյալ կերպ ձևակերպեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության խնդիրները՝ «աջակցության ցուցաբերում ազատ ժողովուրդներին, որոնք պայքարում են իրենց ստրկացնել ցանկացող փոքրամասնությունների կամ արտաքին սպառնալիքների դեմ»[7]: ԽՍՀՄ-ին դիմակայելու այս քաղաքականությունը դրսևորվեց դեռ Պոտսդամի վեհաժողովում, որտեղ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջներ էր ներկայացրել Թուրքիային: Այն է՝ չեղյալ հայտարարել 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ու Խորհրդային Հայաստանին վերադարձնել անօրինակությամբ խլված Կարսի մարզը և

[7] Public Papers of the Presidents of The United States. Harry S. Truman: Containing the Public Messages, Speeches, and Statements of the President, January 1 to December 31, 1947, Washington: USGPO, 1963, p. 179; . ( . . . ), : ,2014, .308.

Արևմտյան Հայաստանի այլ տարածքներ, փոխել սևծովյան նեղուցների կարգավիճակը և թույլ տալ իրեն ռազմածովային հենակետ ունենալ Բոսֆորում և Դարդանելում[8]:

«Թրումենի հայեցակարգը» նախատեսում էր նաև ամերիկյան կապիտալ ներդրումներ Աֆրիկայում, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Հնդկաստանում, Պակիստանում[9]: Առանձին տեղ էր հատկացվում Իրանին՝ հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը, նավթը և այլ գործոններ[10], քանի որ Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ը փորձում էր ակտիվորեն միջամտել Իրանի ներքին գործերին[*]:

«Թրումենի հայեցակարգը» դարձավ միջազգային հարաբերությունների նոր սկիզբը և խնդիր ուներ ապահովել ԱՄՆ-ի քաղաքական և տնտեսական ազդեցությունը այն երկրներում որոնց ուղղված էր այդ օգնությունը: Այստեղ ամբողջությամբ արտահայտված էր ԽՍՀՄ-ի ազդեցության մեծացման հանդեպ ԱՄՆ-ի դրսևորած ամբողջական վախը և գործնական հստակ խնդիր էր դրված նրան զսպելու ուղղությամբ: 1947 թ. հունիսի 5-ին «Թրումենի դրույթը» փոխարինվեց «Մարշալի պլանով»[11]: Այն Եվրոպային առաջարկում էր Երկրորդ աշխարհամարտի ավերածությունների հաղթահարման, տնտեսության վերականգնման ծրագիր, որը հնարավորություն կտար խուսափել «քաղաքական ցնցումներից» և «հուսահատությունից», կոգներ վերականգնել համաշխարհային տնտեսությունը և կայուն խաղաղությունը[12]: Այս պայմաններում Եվրոպայի տնտեսության վերականգնման ծրագիրը կամ Մարշալի պլանը Եվրոպայի կապիտալիստական համակարգի համար եղավ փրկություն, քանզի ծրագրի հեղինակները լավ էին հասկանում որ սովը չքավորությունը, ավերածությունները հասարակությունների մոտ մեծացնում է համակրանքն ու հակվածությունը կոմունիստական կարգերի նկատմամբ:

---

[8] **Վիրաբյան Ա.,** Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Ե., «Գիտություն», 2001, էջ 34-63.

[9] **Բայբուրդյան Վ.,** Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Ե., «Զանգակ 97», 2006, էջ 653:

[10] Նույն տեղում, էջ 639-654:

[*] Իրանական Ադրբեջանում և Քրդստանում ԽՍՀՄ-ի հրահրմամբ սկսվեց մի շարժում դրանք Իրանից անջատելու և ԽՍՀՄ-ին միացնելու համար (Խորհրդային Ադրբեջանի շրջանակներում): 1946թ. դեկտեմբերին Իրանի կառավարությունը ճնշեց Իրանական Ադրբեջանում և Քրդստանում սկսված անջատողական շարժումները: 1947 թ. հոկտեմբերի 6-ին Իրանի կառավարությունը ԱՄՆ-ի հետ կնքեց ռազմական համաձայնագիր «Թրումենի հայեցակարգի» շրջանակներում օգնություն ստանալու վերաբերյալ: 1947 թ. հունիսին Իրանին հատկացվեց 25 մլն դոլարի ռազմական փոխառություն: 1948 թ. ԱՄՆ-ը Իրանին հատկացրեց 10 մլն դոլար և այլն (Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 639-654):

[11] **Իվանյան Է.,** Սպիտակ տուն. պրեզիդենտներ և քաղաքականություն, Ե., «Հայաստան», 1979, էջ 307-308:

[12] The "Marshall Plan" speech at Harvard University, 5 June 1947 // http://www.oecd.org/general/themarshallplanspeechatharvarduniversity5june1947.htm

ԱՄՆ-ի Կոնգրեսը 1948-1951 թթ. մոտ 13 մլրդ դոլար հատկացրեց Ա Եվրոպայի տնտեսության վերականգնման համար[13]: Դեռ մայիսի 23-ին ԱՄՆ պետքարտուղար Ջ. Մարշալը անց էր կացրել խորհրդակցություն, որտեղ որոշվել էր, որ Արևելյան Եվրոպայի երկրները նույնպես կարող են մասնակցել Եվրոպայի վերականգնման ծրագրին, եթե նրանք հրաժարվեն ԽՍՀՄ-ի հանդեպ ունեցած տնտեսական կողմնորոշումից՝ ի օգուտ եվրոպական ինտեգրման: Ընդորում Արևմտյան Եվրոպայի վերականգնման համար առաջարկվում էր օգտագործել Արևելյան Եվրոպայի հումքային պաշարները[14]: Ինչպես նկատում ենք ծրագիրը պատրաստվել էր այնպես, որ նրանում ԽՍՀՄ-ի և Արևելյան Եվրոպայի մասնակցությունը դառնար բավականին խնդրահարույց:

1947 թ. հունիսի 27-ից հուլիսի 2-ը Փարիզում կայացավ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի արտգործնախարարների (է. Բևին, Ժ. Բիդո, Վ. Մոլոտով) խորհրդաժողովը՝ նվիրված «Մարշալի պլանին»: Սակայն Ֆրանսիայում ԱՄՆ դեսպան Ջ. Քեֆերիի հավաստմամբ Անգլիան և Ֆրանսիան հուսով էին, որ ԽՍՀՄ-ը կհրաժարվի համագործակցությունից[15]: Իրականում Հ. Թրումենի կառավարությունը ձգտում էր մեկուսացնել Խորհրդային Միությանը և կապիտալիստական ուղղուն վերադարձնել Արևելյան և Հարավարևելյան Եվրոպան[16]:

Ռուս հետազոտող Յու. Բոկարևը գտնում է, որ ավելի շուտ հրավերքն ուներ դաշնակցի հանդեպ քաղաքավարիության բնույթ և ոչ ոք չէր սպասում, որ ԽՍՀՄ-ը կընդուներ այն[17]: Հավանական է նաև, որ Խորհրդային Միությունը խորհրդաժողովին մասնակցել է միջազգային մեկուսացումից խուսափելու, արևմտյան դաշնակիցների և եվրոպական պետությունների վերջնական կողմնորոշումը պարզելու համար:

Սկզբնական շրջանում ԽՍՀՄ-ը հետաքրքրություն ցուցաբերեց «Մարշալի պլանի» նկատմամբ: «Մարշալի պլանի» հեղինակները առաջարկում էին, որ ծրագրին մասնակից պետությունները մանրամասն հաշվետվություն ներկայացնեն իրենց տնտեսության դրության, արժութային միջոցների ու ներուժի մասին, իսկ հետո նոր

---

[13] **Wilson T. A.** The Marshall Plan 1947-1951, «Headline Series 236», June 1977, p. 47; **De Long J. B., Eichengreen B.** The Marshall Plan: History's Most Successful Structural Adjustment Program, Harvard University, University of California at Berkeley, 1991, p. 14.

[14] **Наринский М. М.** СССР и План Маршалла. По материалам Архива президента РФ // Новая и новейшая история. 1993. № 2. с. 11.

[15] **Наринский М. М.** Нарастание конфронтации: план Маршалла, Берлинский кризис // Советское общество: возникновение, развитие, исторический финал, т. 2. М., 1997, с. 57.

[16] История США (глав. ред. **Г. Н. Севостьянов**), т. 4, М.: «НАУКА», 1987, с. 92.

[17] **Бокарев Ю.П.** Еще раз об отношении СССР к плану Маршалла // Отечественная история, 2005. № 1, с.92.

միայն տնտեսաֆինանսական օգնություն խնդրեն ԱՄՆ-ից[18]: Անգլիայի և Ֆրանսիայի արտգործնախարարներ է. Բևինը և Ժ. Բիդոն գտնում էին որ «Մարշալի պլանի» իրականացման համար ամբողջ Եվրոպայի և այդ թվում ԽՍՀՄ-ի տնտեսությունները պետք է միավորվեն: Խորհրդային տնտեսագետ Ե. Վարգան հունիսի 24-ին Վ. Մոլոտովին ուղղված զեկուցագրում պնդում էր, որ «Մարշալի պլանը» նպատակ ունի նախ և առաջ մեղմացնելու ԱՄՆ-ի տնտեսական ճգնաժամը, հսկայական վարկեր տրամադրի և ձերբազատվի երկրում առկա հսկայական գերարտադրանքից: ԱՄՆ-ում ԽՍՀՄ դեսպան Ն. Նովիկովը հունիսի 9-ին Վ. Մոլոտովին գրած նամակում նա ընդգծեց, որ ԱՄՆ-ը խնդիր ունի աջակցություն ցույց տալու հակախորհրդային ուժերին, պայմաններ ստեղծի Եվրոպայում և Ասիայում իր կապիտալի ամրապնդման, նրանց քաղաքական ու տնտեսական առումով իրեն ենթարկելու համար[19]:

Խորհրդային Միությունը վճռականորեն մերժեց ԱՄՆ-ի կողմից ԽՍՀՄ-ի և Արևելյան եվրոպայի պետությունների տնտեսության հանդեպ ամեն տեսակի վերահսկողությունը: Սակայն ԽՍՀՄ-ը կողմնակից էր այն տեսակի օգնությանը, որը պատերազմի ժամանակ բնորոշ է եղել լենդ-լիզին[20]: Բայց դա ամերիկյան կողմի համար անընդունելի էր. նա չէր կարող օգնել ԽՍՀՄ-ին, որի պետական ու տնտեսական համակարգի դեմ պայքարում էր և ում դեմ ուղղված էր այս ծրագիրը: Լենդ-լիզի սկզբունքներով «Մարշալի պլանի» կազմակերպման բացառումը կրկին անգամ հերքում է նրա զուտ մարդասիրական բնույթը՝ ուղղված սովի, աղքատության հաղթահարմանը և անհատույց պայմաններով տնտեսության վերականգնմանը: Այս պայմաններում խորհրդային պատվիրակությունը հուլիսի 2-ին Վ. Մոլոտովի գլխավորությամբ հրաժարվեց ընդունել «Մարշալի պլանը»՝ այն համարելով պետությունների ինքնավարության կորստի ծրագիր: Խորհրդային Միության ճնշման տակ Արևելաեվրոպական երկրները ստիպված եղան հրաժարվել «Մարշալի պլանից»:

Խորհրդային կառավարությունը «Մարշալի պլանից» հրաժարվելը մեկնաբանում էր նաև նրանով, որ ամերիկացիները դրանով հետապնդում են «զսպման» դրույթի և «Թրումենի հայեցակարգի» սկզբունքները, որոնք ընդունվել են ընդդեմ ԽՍՀՄ-ի և նպատակ են հետապնդում ճնշել ժողովրդական ելույթները Արևելյան Եվրոպայի երկրներում և ամրապնդել ԱՄՆ-ի իշխանությունը տարածաշրջանի պետությունների

---

[18] Նույն տեղում, էջ 91:

[19] Телеграмма посла СССР в США Н. В. Новикова министру иностранных дел СССР В. М. Молотову от 9 июня 1947 г. // Международная жизнь. 1992, № 5, с. 117-118.

[20] **Наринский М. М.,** Нарастание конфронтации: план Маршалла, Берлинский кризис / http://you191791.narod.ru/narinskiy_narast.html

վրա և թույլ չտալ վերջիններիս որևէ հարաբերություններ ունենալ Խորհրդային Միության հետ:

ԽՍՀՄ-ի ճնշման ներքո Ալբանիան, Հունգարիան, Բուլղարիան, Լեհաստանը, Ռումինիան, Հարավսլավիան, Չեխոսլովակիան և Ֆինլանդիան նույնպես մերժեցին «Մարշալի պլանը»:

Ռուս հետազոտող Մ. Նարինսկու կարծիքով խորհրդային կառավարության որոշումը՝ հրաժարվել «Մարշալի պլանից», եղել է սխալ[21]: Սակայն ըստ նրա, եթե ԽՍՀՄ-ը ձգտում էր իր ազդեցությունը տարածել Արևելյան Եվրոպայի պետությունների վրա և բացառել Արևմուտքի ու հատկապես ԱՄՆ-ի ազդեցության տարածումն այդ տարածաշրջանի վրա, ապա հրաժարումը «Մարշալի պլանից» այնքան էլ «անմտածված չէր»[22]: Մ. Նարինսկին այստեղ հակասել է ինքն իրեն, իսկ «Մարշալի պլանի» նպատակների վերլուծության առումով՝ որոշակի «շտապողականություն»: Գրեթե նմանօրինակ մոտեցում ունեն պատմաբաններ Վ. Զուբոկը և Կ. Պլեշակովը: Նրանք իրենց համատեղ գրքում գտնում են, որ հեռանալով Փարիզի խորդաժողովից Վ. Մոլոտովը բռնեց պարտության ուղին: Նրանք գտնում են, որ եթե Վ. Մոլոտովը մնար, կկարողանար սակարկել, տնտեսական գործարք կնքել կամ հասնել նրան, որ ԱՄՆ Կոնգրեսում «Մարշալի պլանը» տապալվի: Բայց Ի. Ստալինը և Վ. Մոլոտովը, ըստ Վ. Զուբոկի և Կ. Պլեշակովի, ինչպես միշտ վարեցին աղետալի, ձախողակ քաղաքականություն[23]: Վ. Զուբոկի և Կ. Պլեշակովի մոտեցումը միակողմանի է, նրանք անտեսել են ակնհայտ փաստերը և հիմնվել են ենթադրական վերլուծության վրա, քանի որ ամերիկյան կողմը նույնպես կարող էր սակարկել և աստիճանաբար «Մարշալի պլանի» իրագործման ընթացքում իր տրամադրած վարկերի, օգնության և ապրանքների համար պահանջարկ ստեղծեր խորհրդային շուկայում ու առաջ քաշեր քաղաքական, տնտեսական պահանջներ՝ սպառնալով առաջացնել տնտեսական փլուզում (կոլապս): Նրանք մոռանում են, կապիտալիստական և կոմունիստական հասարակարգերի անհամատեղելիությունը, որ 1946 թ. պաշտոնապես մեկնարկել էր սառը պատերազմը, 1947 թ. հրապարակվել էր «զսպման» դրույթը, «Թրումենի հայեցակարգը», միջուկային հարվածի և «դոլարի դիվանագիտության» սպառնալիքը

---

[21] Տե՛ս **Наринский М. М.,** СССР и план Маршалла. Холодная война. Новые подходы. Новые документы. М., 1995. с. 172-180.

[22] Տե՛ս **Наринский М. М.** СССР и План Маршалла. По материалам Архива президента РФ // Новая и новейшая история. 1993. № 2, с. 11-19.

[23]Տե՛ս **Zubok V., Pleshakov C.** Inside the Kremlin's Cold War. From Stalin to Krushchev. Cambridge, 1996, p. 41-56; նաև **Зубок В. М.,** Неудавшаяся империя: Советский Союз в холодной войне от Сталина до Горбачева, М.: РОССПЭН, 2011, с. 55-151.

(Երկրորդ աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի ամենամեծ հաղթանակը Բրեթոն-Վուդսի ֆինանսական համակարգի ձեռքբերումն էր, որին ԽՍՀՄ-ը Ի. Ստալինի մահից հետո միջազգային առևտրի շրջանակներում աստիճանաբար սկսեց ենթարկվել[24]): 1946 թ. սկսվել էր Չինաստանի քաղաքացիական պատերազմը, որտեղ չանկայշիական վարչակարգը աջակցություն էր ստանում ԱՄՆ-ից, իսկ կոմունիստները՝ ԽՍՀՄ-ից, 1948 թ. մարտի 17-ին Բրյուսելում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բենիլյուքսը ստորագրվել էին համատեղ ռազմական պաշտպանության համաձայնագիր, որը հակասում էր Յալթայի և Պոտսդամի վեհաժողովներում ձեռք բերված միջազգային համատեղ անվտանգության համաձայնագրին և ռազմական առումով անմիջականորեն հակադրվում էր ԽՍՀՄ-ին[25]: Գերմանական հարցում լարվածությունը հասել էր իր գագաթնակետին՝ 1948 թ. հունիսի 21-ին, այսինքն՝ Փարիզի վեհաժողովից մեկ շաբաթ առաջ, սկսվել էր Բեռլինի շրջափակումը և այլն: Եվ ուրեմն ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը արդեն աշխարհաքաղաքական հակառակորդներ էին: Մ. Նարինսկու, Վ. Զուբոկի, Կ. Պլեշակովի և այլոց սխալներից մեկն էլ այն է, որ նրանք «Մարշալի պլանը» տեսնում է միայն 1948-1951 թթ. ժամանակահատվածի մեջ, որը հետապնդում է միայն կարճաժամկետ նպատակ, այլ ոչ թե մի ծրագիր, որը կազմակերպեց ԱՄՆ-ի հատկապես տնտեսական արտաքին քաղաքականությունը սառըպատերազմյան և հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում: Վերոհիշյալ ուսումնասիրողները հաշվի չեն առել նաև անգլո-ամերիկյան աշխարհաքաղաքականության հայտնի տեսաբանների և հատկապես՝ Հ. Մակքինդերի, Ա. Մեխենի, Ն. Սպայկմենի և այլոց հայացքները, որոնք գործնականում դրվեցին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի և ծրագրերի հիմքում և իրենց սուր ծայրով ուղղված էին ԽՍՀՄ-ի դեմ: Նրանք անտեսել են 1948 թ. հրապարակված ԱՄՆ-ի ԱԱԽ-ի 20/1 հուշագիրը («Դալլեսի պլանը»), 1950 թ.՝ ԱԱԽ-ի 68-րդ բանաձևը և այն հանգամանքը, անկախ ԽՍՀՄ-ի հասարակական-քաղաքական կառուցվածքից, այն ԱՄՆ-ի համար հանդիսացել է աշխարհաքաղաքական հակառակորդ: Չի բացառվում, որ ԽՍՀՄ-ը, ընդունելով «Մարշալի պլանը», շատ ավելի վաղ կգնար փլուզման:

Խորհրդային կառավարության քաղաքականությունը կարող էր քննադատության ենթարկվել միայն այն դեպքում, եթե ԽՍՀՄ-ը լիներ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի

---

[24] Տե՛ս **Стариков Н. В.** Национализация рубля – путь к свободе России, СПб.: Питер 2011.

[25] Внешняя политика Советского Союза, 1948 год: Документы и материалы. ч. 1, М.: Госполитиздат, 1950, с. 144-145.

կամ նույնիսկ Ճապոնիայի պես կապիտալիստական երկիր և չլիներ երկբևեռ աշխարհում ծանրության կենտրոններից մեկը:

Խորհրդային հետախուզության գեներալ Պ. Սուդապլատովի տվյալներով դեռևս 1947 թ. հունիսին խորհրդային կառավարությունը հետախուզության տարբեր աղբյուրներից տեղեկություն էր ստացել, համաձայն որի «Մարշալի պլանի» նպատակը Եվրոպայում ամերիկյան տնտեսական գերիշխանության հաստատումն է: Զեկուցագրերում նշվում էին, որ «Մարշալի պլանը» նախատեսում էր նաև գերմանական ռազմատուգանքի դադարեցում: Դա զգոնացրեց խորհրդային իշխանություններին, քանի որ ըստ էության ռազմատուգանքը (10 մլրդ դոլար) հանդիսանում էր արտաքին միջոցներից մեկը, որը հնարավորություն կտար վերականգնել ԽՍՀՄ-ի տնտեսությունը[26]: Այս և այլ հանգամանքներ հաշվի առնելով ԽՍՀՄ-ը հրաժարվեց «Մարշալի պլանից»[27]:

«Մարշալի պլանն» ի վերջո հանգեցրեց Եվրոպայի վերջնական մասնատմանը՝ Արևմտյան և Արևելյան: Այս ծրագիրը որոշակի քաղաքական և հոգեբանական սեպ մտցրեց ԽՍՀՄ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների միջև: Խորհրդային ղեկավարությունը ստիպված էր լուրջ ճնշում գործադրել Լեհաստանի և Չեխոսլովակիայի վրա, որպեսզի նրանք հրաժարվեն «Մարշալի պլանից»: Այս խնդրի հոգեբանական կողմն այն էր, որ ԱՄՆ-ը եվրոպացիների աչքում դիտվում էր որպես տվող և վերականգնող պետություն, իսկ ԽՍՀՄ-ը՝ վերցնող, քանի որ ռազմատուգանքների մի մասը ԽՍՀՄ-ը ստանում էր Գերմանիայի ռազմակալված արևելյան շրջաններից (ապագա Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետություն), ինչպես նաև իր ազդեցության տակ ընկած երկրներից՝ Հունգարիայից, Ռումինիայից, Բուլղարիայից և Լեհաստանի կազմի մեջ մտած գերմանական հողերից[28]:

Այսպիսով, «Մարշալի պլանի» ընդունումը աշխարհաքաղաքական ծանր հետևանքներ կունենար ԽՍՀՄ-ի համար, քանի որ նա պետք է հրաժարվեր Արևելյան Եվրոպայի հանդեպ ունեցած ազդեցությունից, որը հավասարազոր կլիներ խորհրդային համակարգի փլուզմանը և դասական իմաստով կսպառնար նաև նրա աշխարհաքաղաքական կենսական շահերին: ԽՍՀՄ-ը իր տնտեսաֆինանսական,

---

[26] **Судоплатов П. А.,** Спецоперации. Лубянка и Кремль 1930-1950 гг., М.: ОЛМА, 1997, с. 568-570.

[27] Внешняя политика Советского Союза, 1947 год: Документы и материалы, ч. 2, М.: Госполитиздат, 1952, с. 132

[28] **Полынов М.Ф.** Холодная война как способ борьбы США против СССР // Общество. Среда. Развитие (Terra Humana), № 3, 2008. с. 46

հասարակական-քաղաքական կյանքը, ռազմական արդյունաբերությունը պետք է դներ ԱՄՆ-ի վերահսկողության տակ:

1949 թ. ԽՍՀՄ-ը Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը տնտեսապես միավորվեց Տնտեսական փոխօգնության խորհուրդի (ՏՓԽ) կազմակերպության մեջ՝ ի պատասխան «Մարշալի պլանի»: Երեք տարվա ընթացքում ԽՍՀՄ-ը անդամ երկրներին տրամադրեց 3 մլրդ դոլարի արտոնյալ վարկ: Ի տարբերություն «Մարշալի պլանի» ՏՓԽ-ի գործունեությունն առաջին հերթին նպատակ է ունեցել վերականգնել ԽՍՀՄ-ի տնտեսությունը: Որոշ հաշվարկներով 1949-1955 թթ. ԽՍՀՄ-ը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներից արտահանել է մոտ 13 մլրդ դոլար (մեկ այլ տվյալներով 1948-1953 թթ. այն կազմել է 14 մլրդ դոլար)՝ գումար որ ԱՄՆ-ը տրամադրել է «Մարշալի պլանին» մասնակից երկրներին[29]:

Այնուամենայնիվ, ինչպիսին էլ որ լիներ ԱՄՆ-ը, «Մարշալի պլանը» և նրա առաջ քաշած սկզբունքները, այն առավել համակրելի և հեռանկարային էր Եվրոպական 16, իսկ հետո նաև աշխարհի զգալի մասի համար, քան ամբողջատիրական ԽՍՀՄ-ը և նրա ՏՓԽ-ն, որը Արևելյան Եվրոպայում պետք է հակադրվեր «Մարշալի պլանին»:

1949-1955 թթ. Արևմուտքի նախաձեռնությամբ ստեղծված ռազմաքաղաքական դաշինքերին (ՆԱՏՕ, ՍԵԱՏՕ, ՍԵՆՏՕ / Բաղդադի պակտ և այլն[30]) ԽՍՀՄ-ը պատասխանեց 1955 թ. մայիսի 14-ին Վարշավյան պայմանագրի կազմակերպության (ՎՊԿ) հիմնումով, որի մեջ մտան ԽՍՀՄ-ը, Լեհաստանը, Հունգարիան, Ռումինիան, Ալբանիան, Բուլղարիան, ԳԺՀ-ն, Չեխոսլովակիան[31]: Ռազմաքաղաքական այս դաշինքը հանդիսանում էր ՆԱՏՕ-ի «հակակշիռը», սակայն ի տարբերություն վերջինի, ՎՊԿ-ն ուներ ԽՍՀՄ-ի կողմից միակողմանի պարտադրված բնույթ (որոշումների ընդունումը ՎՀԿ-ում ամբողջությամբ վերապահվել է ԽՍՀՄ-ին), ինչն էլ պայմանավորեց նրա կենսունակությունը մինչև 1991 թ.[*]:

---

[29] План Маршалла // oboguev.livejournal.com/1509158.html

[30] Ռազմաքաղաքական դաշինքների մասին մանրամասն տե՛ս **Բորիսով Վ., Վասյուտովիչ Պ., Ֆարամազյան Ռ. և ուրիշներ,** Միլիտարիզմ. Թվեր և փաստեր, Ե., «Հայաստան» 1987:

[31] История внешней политики СССР 1945-1980 гг. (под. ред**. А. А. Громыко**), т. 2, М.: Наука, 1981, с. 192-193.

[*] Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԽՍՀՄ-ի գերտերության կարգավիճակի և երկբևեռ աշխարհի հավասարակշռության ապահովման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1949 թ. օգոստոսի 29-ին Սեմիպալատինսկում ԽՍՀՄ-ի կողմից միջուկային ռումբի փորձարկումը, որը ԱՄՆ-ին զրկեց այս զինատեսակի մենաշնորհից: Այժմ երկու գերտերությունների միջև յուրաքանչյուր ընդհարում կարող էր վերածվել միջուկային պատերազմի: Այս պայմաններում աստիճանաբար ձևավորվեց «Միջուկային ակումբը», որտեղ մտան ԱՄՆ-ը, ԽՍՀՄ-ը և այն պետությունները, որոնք նույնպես ստեղծել էին իրենց ատոմային զենքը՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Չինաստանը, Հնդկաստանը:

## Աշխարհաքաղաքականությունը որպես ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունների բաժանարար

ԽՍՀՄ-ում «աշխարհաքաղաքականությունը»* համարվում էր կեղծ և բուրժուական գիտություն, սակայն այդ ամենից անկախ այն իրականացվում էր (հեղափոխության և դասակարգային պայքարի արտահանում, համաշխարհային սոցիալիստական հասարակարգի ստեղծում): Ի. Ստալինի իշխանության տարիներին ԽՍՀՄ-ին հաջողվեց իր ազդեցությունը և ռազմավարական ներկայությունն ապահովել Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում: Ըստ Ա. Դուգինի Յալթայի և Պոտսդամի վեհաժողովներից հետո Արևելյան և Կենտորնական Եվրոպայում ձևավորված ռազմաքաղաքական դրությունը Ի. Ստալինը (նաև Լ. Բերիան) համարել է ԽՍՀՄ-ի ապագայի համար վտանգավոր ու ձգտել է ԽՍՀՄ-ի ազդեցությունը տարածել նաև Արևմտյան Եվրոպայի վրա կամ այնպես անել, որ Եվրոպան ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հակամարտության և սառը պատերազմի պայմաններում պահպանի իր չեզոքությունը, որի պարագայում ԱՄՆ-ը (նաև ՆԱՏՕ) իր զորքերը դուրս կբերի Արևմտյան, իսկ ԽՍՀՄ-ը Արևելյան և Կենտրոնական Եվրոպայից և երկու գերտերությունների միջև կհաստատվի հարաբերական խաղաղություն և խաղաղ գոյակցություն: Որքան լայն լիներ եվրոպական «չեզոք գոտին», այնքան այն առավել հարմար կլիներ ԽՍՀՄ-ի համար[32]: Այդ առումով 1960-ական թթ վերջին բելգիացի աշխարհագրագետ Ժ. Տիրիարը գտնում էր, որ ԽՍՀՄ-ի փլուզումը անխուսափելի կլինի, եթե Եվրոպայի սահմանները կառուցվածքային փոփոխության չենթարկվեն: Նա առաջ քաշեց դեպքերի զարգացման հետևյալ տարբերակը՝ ստեղծել «Եվրո-խորհրդային կայսրություն Վլադիվոստոկից մինչև Դուբլին»[33], այսինքն՝ Վարշավյան դաշինքի սահմանների ընդլայնում մինչև Ատլանտյան օվկիանոս: Ամեն դեպքում խնդիրը կայանում էր նրանում, որ սահմանների կառուցվածքը փոխվեր: Ա. Դուգինը գրում է, որ հետագայում այս աշխարհաքաղաքական իրողությունն էլ իր աղետաբեր ազդեցությունն ունեցավ Վարշավյան պայմանագրի վրա[34]:

---

* Աշխարհաքաղաքականությունը քաղաքական մտքի ուղղություն է աշխարհագրական տարածքի նկատմամբ տեղային, տարածքային կամ բացարձակ վերահսկողություն հաստատելու մասին: Ինչպես ասում էր Նապոլեոնը. «Պետության արտաքին քաղաքականության մասին կարելի է դատել՝ ուսումնասիրելով նրա աշխարհագրական դիրքը» (**Каплан Р.** Месть географии. Что могут рассказать географические карты о грядущих конфликтах и битве против неизбежного. М.: Коибти, 2016, с. 83):

[32] **Дугин А.** ,Геополитика России, М.: Академический проект, 2012, с. 335.

[33] **Тириар Ж.** Евро-советская империя // https://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/Article/tir_evrsov.php

[34] Дугин А., նշվ. աշխ., էջ 335:

Անգլո-ամերիկյան աշխարհաքաղաքագետներ Հ. Մակքինդերը, Ա. Մեխենը, Զ. Քենանը Ն. Սպայկմենը, Ռ. Ստրաուս-Հյուպեն, Զ. Բժեզինսկին և այլք[35] մշակել էին ԱՄՆ-ի կողմից աշխարհի կառավարման գոտիների այնպիսի համակարգ, որը անխուսափելիորեն բերելու էր Եվրասիայում Ամերիկայի գերիշանությանը: Այդ ռազմավարության մեջ մտնում էր Եվրասիայից ԽՍՀՄ-ի մեկուսացումը և ամբողջ աշխարհով նրա շրջափակումը: Հիմնական ռազմավարության նպատակը ԱՄՆ-ի վերահսկողության ներքո ափամերձ գոտիների (Ռիմլենդ)՝ Արևմտյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի, Հեռավոր Արևելքի, Հնդկաստանի և Հնդկաչինի միվորումն էր: Իսկ ԱՄՆ-ի կողմից ռազմակալված Ճապոնիան արդեն հենակետ էր հանդիսանում ամերիկյան ռազմածովային ուժերի համար: ԽՍՀՄ-ը արձագանքում էր այս ռազմավարությանը (մարքսիզմ-լենինիզմի և կոմունիզմի արտահանման սկզբունքով) իր հերթին ձգտում էր չեզոքացնել ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի վերահսկողությունը ափամերձ գոտիների (Ռիմլենդ) նկատմամբ: Դա է նաև պատճառներից մեկը, որ նա եռանդուն կերպով պաշտպանում էր հեղափոխական շարժումը Չինաստանում, միջամտել էր Կորեական և Վիետնամական պատերազմներին: Բացի այդ ԽՍՀՄ-ը աջակցություն էր ցուցաբերում մահմեդական աշխարհում դրսևորվող սոցիալիստական միտումներին և օգնում էր Արևմտյան Եվրոպայի կոմունիստական կուսակցություններին: Դասական աշխարհաքաղաքականության տեսանկյունից ծովային (ԱՄՆ) և ցամաքային (ԽՍՀՄ) քաղաքակրթությունների պայքարը տեղափոխվեց նաև այլ մայրցամաքներ՝ Աֆրիկա և Լատինական Ամերիկա: Աֆրիկայում դա տեղի ունեցավ Անգոլայում, Եթովպիայում, Սոմալիում, Մոզամբիկում (աֆրոկոմունիզմ), իսկ Լատինական Ամերիկայում՝ Կուբայում և հզոր կոմունիստական շարժումները Չիլիում, Արգենտինայում, Պերուում, Վենեսուելայում և այլն[36]:

ՎՀԿ-ի երկրներում ռազմական ներկայությունից բացի, ԽՍՀՄ-ը սառը պատերազմի տարիներին ռազմածովային հենակետեր ստեղծեց Եգիպտոսում,

---

[35] Թեմային վերավերող աշխարաքաղաքական տոսությունների մասին տե՛ս **Mackinder J. H.** Democratic Ideals and Reality, Washington: NDU, 1996; **Spykman N.** America's Strategy in World Politics: The United States and the Balance of Power, N.Y., Harcourt, Brace and Company, 1942; **Мэхэн А.** Влияние морской силы на историю 1660-1783, М.: АСТ, 2002; **Бжезинский З.** Великая шахматная доска: Америка и его геостратегические императивы, М.: ИМО, 2005; **Мухаев Р. Т.** Геополитика, 2-е издание, М.: Юнит, 2010.

[36] Дугин А., նշվ. աշխ., էջ 335-336:

Սիրիայում, Եթովպիայում, Եմենում, Անգոլայում, Գվինեայուն, Լիբիայում, Թունիսում, Հարավսլավիայում, Վիետնամում[37]:

1950-ական թթ. հիմնականում ձևավորվեց երկու հակառակ համակարգերի աշխարհաքաղաքական պատկերը, որը Հ. Մակքինդերի նախագծած ցամաքային քաղաքակրթության (Հարթլենդի) աշխահրաքաղաքական քարտեզի գործնական արտահայտությունն էր: Նրա Հարթլենդը և ցամաքային քաղաքակրթությունը արտահայտված էր ԽՍՀՄ-ի, Վարշավյան համաձայնագրի երկրների, սոցիալիստական վարչակարգերի միասնության տեսքով: Խորհրդային Միությունը վերածվեց Եվրասիական հզոր տերության:

## ԱՄՆ-ի նախագահ Դ. Էյզենհաուերի և նրան հաջորդած վարչակազմների հայեցակարգային արտաքին քաղաքականությունը ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում (1950-1960-ական թթ.)

1950-1960-ական թթ. գաղութային երկրների մեծամասնությունը ձեռք բերեց անկախություն: Ի հայտ եկավ «երրորդ աշխարհն» ու «չմիացած երկրների շարժումը»: Այս հասկացությամբ էին բնորոշում երկբևեռ աշխարհի պայմաններում ինքնուրույն դիրքորոշում ունեցող երկրներին: «Երրորդ աշխարհը» մերժում էր երկու մասի բաժանված աշխարհի երևույթը, որտեղ կշիռ ունեին միայն ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, իսկ մնացյալ երկրները պետք է ընտրություն կատարեին նրանց միջև: Աշխարհի հիշյալ հատվածը չէր վստահում միջուկային զենքին տիրապետող գերտերություններին: Նրանք մերժում էին վերջիններիս պնդումներն այն մասին, որ կապիտալիզմն ու կոմունիզմը իդեալական կենսակերպն են: «Երրորդ աշխարհի» դիրքորոշման հիմքում ընկած էր սառը պատերազմում չեզոքություն պահպանելը և «չմիանալու քաղաքականությունը»[38]: Այս պետությունները իրենցից ներկայացնում էին այսպես կոչված «չեզոք գոտիներ», որտեղ ազդեցություն ձեռքբերելու նպատակով կապիտալիստական և սոցիալիստական համակարգի երկրները ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գլխավորությամբ ծավալել էին գրեթե հավասար պայքար[39]: Այնուամենայնիվ սառը պատերազմի տարբեր ժամանակաշրջաններում մահմեդական շատ

---

[37] **Баранец В.** Как СССР строил военные базы за рубежом // http://www.kp.ru/daily/25728.5/2718781/; Военные базы СССР и России за рубежом / http://www.agentura.ru/infrastructure/bases/russbases/

[38] **Хантингтон С.,** Столкновение цивилизаций, М.: АСТ, 2007, с. 272-273.

[39] Дугин А., նշվ. աշխ., էջ 337:

պետություններում, այդ թվում նաև Ալժիրում, Թուրքիայում, Հորդանանում, Եգիպտոսում ԱՄՆ-ը հովանավորում ու աջակցում էին մահմեդական արմատականներին, որպես կոմունիստների դեմ պայքարող մարտիկների[40]: Ի տարբերություն Աֆրիկայի և Հարավարևելյան Ասիայի երկրների՝ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի (նաև Արևմտյան Եվրոպա) և ԽՍՀՄ-ի պայքարը ուներ առավել արմատական և սկզբունքային կողմ:

Երկու գերտերությունների միջև հատկապես սուր և լարված պայքար ծավալվեց նավթով հարուստ մերձավորարևելյան տարածաշրջանում: 1957 թ. հունվարի 5-ին հրապարակվեց նախագահ Դ. Էյզենհաուերի անունը կրող «Էյզենհաուերի հայեցակարգը»: ԱՄՆ-ը կառավարությունը օգտվելով Մերձավոր Արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի պարտությունից ու արտաքսումից, հայտարարեց, որ ինքը կոչված է լցնելու ստեղծված «վակուումը», զբաղեցնելու այն դիրքերը, որ կորցրել են Անգլիան ու Ֆրանսիան Մերձավոր Արևելքում[41]: 1957 թ. մարտի 9-ին ԱՄՆ-ի Կոնգրեսն ընդունեց օրենք և առանձնացրեց 200 մլն. դոլար[42], որը Մերձավոր Արևեքի երկրների անկախությունը պաշտպանելու պատրվակով ԱՄՆ-ի նախագահին իրավունք էր տալիս տնտեսական և ռազմական օգնություն ցույց տալ ցանկացած երկրի կամ երկրների խմբի, ով դրա կարիքը կունենա՝ ընդդեմ որևէ երկրի զինված հարձակման, որը վերահսկվում է միջազգային կոմունիզմի կողմից»[43]: Դրանով ԱՄՆ-ի կառավարությունը միակողմանիորեն իրեն իրավունք էր վերապահում միջազգային կոմունիստական սպառնալիքի դեմ պայքարի պատրվակով միջամտել Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների ներքին գործերին[44]:

«Էյզենհաուերի հայեցակարգի» գաղութատիրական և զավթողական էության մասին խորհրդային կառավարությունը տարածեց հայտարարություն, զգուշացնելով Մերձավոր Արևելքի երկրներին այն վտանգի մասին, որի մեջ նրանք կհայտնվեն «հայեցակարգը» ընդունելու դեպքում, քանի որ «Էյզենհաուերի դոկտրինայում» հնչում էր «ոչ թե խաղաղության, այլ պատերազմի ձայնը»[45]: Արաբական պետությունների զգալի մասը հրաժարվեց ընդունել «Էյզենհաուերի հայեցակարգը»: Այն ընդունվեց

---

[40] Хантингтон С., նշվ. աշխ., էջ 254:

[41] Public papers of the presidents of the US Dwight D. Eisenhower (by **D. Eisenhower**), Containing the Public Messages, Speeches and Statements of the President, January 1 to December 31, 1957, Washington, US GPO, 1957, p. 6.

[42] Public Law 85-7 Joint resolution to promote peace and stability in the Middle East. 117 (85th). Mar 9, 1957 (2, 3) // https://www.govtrack.us/congress/bills/85/hjres117/text; Внешняя политика США. Хрестоматия, с. 386.

[43] Public papers of the presidents of the US Dwight D. Eisenhower (by D. Eisenhower), p. 12-13.

[44] **Հովհաննիսյան Ն.,** Արաբական երկրների պատմություն, h. IV, Ե., «Զանգակ 97», 2007, էջ, 487

[45] Крах ‚доктрины Эйзенхауэра‚ // http://econbooks.ru/books/part/16121

միայն այն պետությունների կողմից որոնք գտնվում էին ԱՄՆ-ից ռազմա-քաղաքական և տնտեսական կախվածության տակ: Իսկ ԽՍՀՄ-ի գործուն աջակցությամբ Սիրիան, Լիբանանը, Իրաքը, Եգիպտոսը հրաժարվեցին ընդունել «էյզենհաուերի հայեցակարգը»[46]:

Արաբական Արևելքում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև պայքարի սաստկացումը անխուսափելիորեն նոր բաժանարար գծեր էր ստեղծում տարածաշրջանում: Այն հիմնականում կենտրոնանալով արաբա-իսրայելական հակամարտության շուրջ՝ իր հերթին աստիճանաբար ձևավորեց երկու հակադիր ճամբարներ, որոնցից մեկը ընդգրկում էր ԽՍՀՄ-ը և «ազգայնական» վարչակարգեր ունեցող Եգիպտոսը, Սիրիան և Իրաքը (1958 թ-ից), իսկ մյուսը՝ ԱՄՆ-ը, Իսրայելը և ամերիկամետ արաբական միապետությունները Հորդանան, Սաուդյան Արաբիա, Քուվեյթ և այլն[47]:

Սակայն 1950-ական թթ. երկրորդ կեսին Մերձավոր Արևելքի երկրներում տեղի ունեցած վերոհիշյալ դեպքերը ոչ թե սպառել էին «էյզենհաուերի հայեցակարգի» գործունեությունը, այլ ժամանակավորապես, մինչև «Քարթերի հայեցակարգի» հրապարակումը, սահմանափակել էին «էյզենհաուերի հայեցակարգի» գործունեության աշխարհագրական միջավայրը: Խորհրդա-աֆղանական պատերազմը հնարավորություն տվեց ԱՄՆ-ին համեմատական առումով ուղղել իրավիճակը Մերձավոր և Միջին Արևելքում և մահմեդական աշխարհը տրամադրել ԽՍՀՄ-ի դեմ: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ի դիրքերը Սիրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Իրաքում նույնպես կայուն չէին: Այս Երկրներում դրությունն այնքան անկայուն էր ու անկանխատեսելի, որ այդ պետություններին ռազմական և տնտեսական օգնություն ցուցաբերելով հանդերձ ԽՍՀՄ-ը նրանց նկատմամբ որդեգրել էր զգուշավոր քաղաքականություն[48]: Չնայած արաբա-իսրաելական երկարատև հակամարտության ընթացքում ԽՍՀՄ-ը ավանդաբար օգնել է արաբական երկրներին և հատկապես 1964 թ. մերձավորարևելյան թաթերաբեմ հայտնված Պաղեստինի ազատագրական կազմակերպությանը (ՊԱԿ), այնուամենայնիվ, նույնիսկ այդ պայմաններում, նրանց հարաբերություններում առկա էին բարդություններ:

ԽՍՀՄ-ի կողմից ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը հակադրվող ամենախոշոր հակազդեցությունը եղավ Կարիբյան ճգնաժամը: 1956-1959 թթ.

---

[46] **Հովհաննիսյան Ն.,** Արաբական երկրների պատմություն, հ. IV, Ե., «Զանգակ 97», 2007, էջ 487-488: Նույնի՝ Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե., «Զանգակ 97», 2006, էջ 276-278, 617-627, 487-489

[47] **Կարապետյան Ռ.,** Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., ԵՊՀՀ, 2003, էջ 179:

[48] «էյզենհաուերի հայեցակարգի» մասին մանրամասն տե՛ս **Նավոյան է.,** «էյզենհաուերի հայեցակարգը» որպես «Մարշալի պլանի» կգբունքների շարունակություն, «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատ., 2013, թիվ 1 (54) էջ 180-186:

Կուբայում Ֆ. Կաստրոյի գլխավորությամբ տեղի ունեցավ սոցիալիստական հեղափոխություն, ինչի արդյունքում, այն դուրս եկավ ԱՄՆ-ի վերահսկողությունից և Արևմտյան կիսագնդում դարձավ ԽՍՀՄ-ի բնական դաշնակիցը: 1962 թ. հոկտեմբերին բռնկվեց Կարիբյան ճգնաժամը, երբ Խորհրդային Միությունը 1961 թ. Թուրքիայում ամերիկյան միջին հեռահարության միջուկային հրթիռների տեղադրմանն ի պատասխան, որոնք ուղղված էին ԽՍՀՄ-ի արևմտյան հատվածի քաղաքների և արդյունաբերական կենտրոնների վրա, Կուբայում տեղադրեց միջին հեռահարության միջուկային հրթիռներ, որոնց գործողության շառավիղը թույլ էր տալիս հարվածներ հասցնել ԱՄՆ-ի ողջ տարածքին և Կենտրոնական Ամերիկային: Երկու երկրների միջև սկսված ծարյահեղ լարված բանակցություններն ավարտվեցին փոխզիջումային տարբերակով, հնարավոր եղավ խուսափել միջուկային պատերազմից: ԽՍՀՄ-ը Կուբայից հեռացրեց իր հրթիռներն ու ռմբակոծիչները, իսկ փոխարենը ԱՄՆ-ն խոստացավ չհարձակվել Կուբայի վրա և Թուրքիայի տարածքից հանել միջուկային հրթիռները՝ այն փոխարինելով ծովային հենակայման հրթիռներով («Պալարիս»)[49]:

Աշխարհաքաղաքականության տեսանկյունից Կարիբյան ճգնաժամը մայրցամաքների միջև հակամարտությունը հասցրեց այնպիսի լարվածության, որ միջուկային պատերազմը դարձավ առավել հավանական: Այդ ճգնաժամը աշխարհաքաղաքական և տարածքային ազդեցության առումով նշանակում էր ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև ուժային հավասարակշռության խախտում: Պայքարը ցամաքային տարածաշրջանից անցնում էր ծովային (կղզային) տարածաշրջան և այդ առումով Կուբայական հեղափոխությունից և ճգնաժամից հետո օրինաչափ էին Ջ. Քենեդիի, Լ. Ջոնսոնի, Ջ. Ֆորդի հայեցակարգերը, որոնք միտված էին «զսպելու» և կանխարգելելու կոմունիստական ազդեցության տարածումը ծովային, այն է՝ Ատլանտյան և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Դրանով կրկնվեց «Մոնրոյի հայեցակարգի» (1823 թ) և «Մաշալի պլանի» սկզբունքները տեղի պետություններում խորհրդամետ վարչակարգերի հաստատմանը կանխարգելելու համար:

1962 թ. ԱՄՆ-ի հետ հնարավոր պատերազմը հաշվի առնելով ԽՍՀՄ-ում ընդունվում է ռազմավարական ծրագիր, որը առաջնային տեղ էր տալիս միջուկային զենքի կիրառմանը (արևմտյան պատմագրությունը այն որակել է որպես մարշալ «Սոկոլովսկու հայեցակարգ»): Խորհրդային այս ռազմավարությունը գրեթե անփոփոխ մնաց մինչև 1980-ական թթ. սկիզբը:

---

[49] **Уткин А. И.** Мировая холодная война, М.: Эксмо, 2005, с. 306-307.

1968 թ. նոյեմբերին ԽՍՀՄ-ի ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևը Լեհաստանի Աշխատավորական միասնական կուսակցության հինգերորդ նստաշրջանում հրապարակեց սոցիալիստական պետությունների հանդեպ Խորհրդային Միության արտաքին քաղաքականությա հիմնական ուղղությունը: Այն «իրավունք էր տալիս» ԽՍՀՄ-ին զորքով միջամտել սոցիալիստական ճամբարի մաս կազմող Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների ներքին գործերին, որպեսզի ապահովեր սոցիալիստական քաղաքական ուղղու կայուն զարգացումը և ԽՍՀՄ-ի հետ այդ երկրների սերտ համագործակցությունը[50] (Արևմուտքի քաղաքական և հասարակական գործիչները հակված են այն որակելու որպես «Բրեժնևի հայեցակարգ» կամ «ինքնիշխանության սահմանափակման հայեցակարգ»): Այսօրինակ քաղաքականությունը հնարավորություն տվեց ԽՍՀՄ-ին ճնշելու 1968 թ. Չեխոսլովակիայի և 1981-1983 թթ. Լեհաստանի հակակառավարական և հակասոցիալիստական համարվող շարժումները: Այն պայմանավորեց ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքական կուրսը 1960-1980-ական թթ.: Սակայն ամբողջությամբ կյանքի չկոչվեց. Չինաստանը և Հարավսլավիան, Ալբանիան, Ռումինիան ունեին անկախ դիրքորոշում: Սոցիալիստական աշխարհում աճող ճգնաժամը գնալով ավելի ակնհայտ էր դառնում:

## ԱՄՆ-ի նախագահներ Ջ. Քարթերի և Ռ. Ռեյգանի վարչակազմների հայեցակարգային արտաքին քաղաքականությունը և ԽՍՀՄ-ի փլուզումը (1980-1991 թթ.)

1978 թ. հոկտեմբերին Աֆղանստանում իշխանության գլուխ եկած խորհրդամետ ուժերի դեմ պայքար ծավալեց արմատական մահմեդականությունը (վահաբիներ): Իշխանության համար պայքարը շուտով վերածվեց քաղաքացիական պատերազմի: Աֆղանական կառավարությունը ռազմական օգնություն խնդրեց ԽՍՀՄ-ից երկրում կայունություն հաստատելու համար: 1979 թ. դեկտեմբերին խորհրդային զորքերը մտան Աֆղանստան, որից հետո քաղաքացիական պատերազմը այստեղ վերածվեց ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի և տևեց տաս տարի: Այն անմիջապես պատճառ հանդիսացավ «Քարթերի հայեցակարգի» հրապարակման համար:

[50] **Брежнев Л. И.** Ленинским курсом, т. II. М.:Политическая литература, 1970, с. 329.

Ջ. Քարթերի վարչակարգի տարիներին ԱՄՆ-ի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Զ. Բժեզինսկին գրում է, որ դեռ 1979 թ. նախագահը ստորագրել էր հրամանագիր Աֆղանստանում հակախորհրդային ուժերին գաղտնի հովանավորելու մասին՝ գիտակցելով, որ տրամադրվող օգնությունը կհանգեցնի խորհրդային զինված միջամտությանը: Այս գործողության նպատակը ԽՍՀՄ-ին աֆղանական ծուղակի մեջ ներքաշելն էր, և երբ խորհրդային զորքերը անցան սահմանը, դա հնարավորություն տվեց ԱՄՆ-ին ԽՍՀՄ-ի համար «ստեղծել իր սեփական Վիետնամը»[51]:

1980 թ. հունվարի 23-ին Ջ. Քարթերը հրապարակեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նոր ուղեգիծը, որ հայտնի է «Քարտերի հայեցակարգ» անունով: Նա հայտարարեց. «Տարածաշրջանը, որ այժմ վտանգված է Աֆղանստան ներխուժած խորհրդային զորքերի կողմից, ունի մեծ ռազմավարական նշանակություն: Այստեղից աշխարհ է արտահանվում նավթի 2/3-րդը: Խորհրդային գերիշխանության հաստատումն Աֆղանստանում հանգեցրեց նրան, որ խորհրդային զորքերը Հնդկական օվկիանոսից գտնվում են 300 մղոն հեռավորության վրա և մոտ են Հորմուզի նեղուցին՝ ծովային ճանապարհին, որի միջով արտահանվում է ամբողջ աշխարհի նավթի զգալի մասը, իսկ դա լուրջ սպառնալիք է ստեղծում Մերձավոր Արևելքում ազատ տեղաշարժման համար: Այս իրավիճակը վճռական գործողությունների դիմելու տեղիք է տալիս, ոչ միայն այս, այլև առաջիկա շատ տարիների համար: Անհրաժեշտ է ջանքեր գործադրել Պարսից ծոցի և Հարավարևելյան Ասիային տարածաշրջանը սպառնալիքներից պաշտպանելու համար և դրան պետք է մասնակցեն նաև այն պետությունները, որոնք կախում ունեն Մերձավոր Արևելքի նավթից և շահագրգռված են պահպանել համաշխարհային գլոբալ խաղաղությունը և հավասարակշռությունը»: Ջ. Քարթերի խոսքերով. «Արտաքին որևէ ուժի փորձը Պարսից ծոցի տարածաշրջանում հսկողություն հաստատելու վերաբերյալ սպառնալիք կհանդիսանա ԱՄՆ-ի կենսական շահերին և նմանօրինակ հարձակումը հետ կմղվի ցանկացած ձևով՝ այդ թվում նաև ռազմական»[52]: «Քարթերի հայեցակարգի» վերջին հիմնական արտահայտությունը գրել էր Ջ. Բժեզինսկին, այն նմանեցնելով «Թրումենի հայեցակարգին», այնպես էր արել, որ հայեցակարգի մեջ մտնի նաև հետևյալ

[51] **Леонтьев М. В.** Большая Игра. Британская империя против России и СССР, М.: Астрель, 2012, с. 256.
[52] Foreign relations of the United States 1977–1980 (ed. **Howard A. M., Ahlberg K. L.**). Foundations of Foreign Policy, V. I, Washington: US GPO, 2014, p. Vo. I, p. 691, 694-695.

արտահայտությունը «որպեսզի պարզ դառնա, որ Խորհուրդները պետք է հեռու մնան Պարսից ծոցից»[53]:

Հայտնի հետազոտող Դ. Երգինը գրում է, որ «Թրումենի», «էյզենհաուերի» և «Նիքսոնի» (Վիետնամականացման կամ Գուամի)[54] հայեցակարգերը պայմաններ են ստեղծել հետագայում «Քարթերի հայեցակարգի» համար: «Թրումենի դոկտրինայում» ասվում էր, որ ԱՄՆ-ը ռազմական օժանդակություն կցուցաբերի այն երկրներին, որոնք կգտնվեն խորհրդային սպառնալիքի տակ: «Քարթերի հայեցակարգում» այդ նախադասությունը օգտագործվեց Իրանի և Սաուդյան Արաբիայի անվտանգությունը ապահովելու տեսքով: «էյզենհաուերի հայեցակարգը» իր հերթին ամերիկյան զորքերը ուղարկել էր Մերձավոր Արևելք իր դաշնակիցներին խորհրդամետ ուժերից պաշտպանելու և Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հեռանալուց հետո տարածաշրջանում առաջացած «վակուումը» լցնելու համար: Իսկ «Նիքսոնի հայեցակարգը» ռազմական օժանդակություն էր նախատեսում նաև Իրանին և Սաուդյան Արաբիային, որպեսզի վերջիններս առանց ԱՄՆ-ի կարողանային ապահովել տարածաշրջանի խաղաղությունը և կայունությունը: 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունը և խորհրդային զորքերի մուտքը Աֆղանստան հակասում էին ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերին, ինչի արդյունքում առաջ եկավ «Քարթերի հայեցակարգը»: Վերջինս իրեն դրսևորել տվեց իրանա-իրաքյան պատերազմի տարիներին, երբ «Տանկերային պատերազմը» առաջ բերեց ՆԱՏՕ-ի անդամ պետությունների և հատկապես ԱՄՆ-ի լուրջ դժգոհությունը: 1987-1988 թթ. ԱՄՆ-ը իր ռազմածովային ուժերի պաշտպանության տակ վերցրեց Քուվեյթի, իսկ հետո նաև չեզոք երկրների նավերը[55]: Սրանով հիմք դրվեց Պարսից ծոցում ԱՄՆ-ի ռազմական ներկայությանը, որի ուղեգիծը հետագայում շարունակեց Ջ. Բուշ ավագը Պարսից ծոցի պատերազմի ժամանակ:

Այսպիսով, ԽՍՀՄ-ին «զսպելու» պատրվակով «Քարթերի» և «Նիքսոնի» դրույթները, ոչ թե եկան լրացնելու կամ շարունակելու «Թրումենի» և «էյզենհաուերի» հայեցակարգերը, այլ եկան պաշտպանելու վերջիններիս գործունեության արդյունքում ձեռք բերված աշխարհաքաղաքական արդյունքները, բնականաբար իրենց մեջ կրելով նաև այդ հայեցակարգերի սկզբունքային տարրերը:

---

[53] **Brzezinski Z.** Power and Principle: Memoirs of the National Security Adviser, 1977-1981, NY: Farrar Straus & Giroux, 1983, p. 444. **Ергин Д.** Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, М.: АП, 2018, с. 759-760.

[54] «Նիքսոնի» կամ «Վիետնամականացման» հաեցակարգի մասին տե՛ս Внешняя политика США. Хрестоматия (сост. **Д. В. Кузнецов**), Благовещенск: БГПУ, 2014. с.416-418.

[55] Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 726-727:

Ազգային անվտանգության հարցերով Ռ. Ռեյգանի խորհրդական Ռ. Ալենը նշում է, որ ԽՍՀՄ-ի դեմ ԱՄՆ-ի համառ պայքարը և նրան ոչ մի տարածք չզիջելը ի վերջո բերեց «Բրեժնևի հայեցակարգի» տապալմանը, ինչը սկզբունքային ձեռքբերում էր[56]:

Այնուամենայնիվ ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը 1945-1985 թթ. հիմնականում մնացել է անփոփոխ: Սակայն սպառազինության մրցավազքը և մշտական մրցակցությունը հիմնականում կայուն կերպով զարգացող կապիտալիստական համակարգի հետ սպառում էր ԽՍՀՄ-ի տնտեսությունը: 1970-ական թթ. համեմատ 1980-ական թթ. սկզբին տնտեսական աճի տեմպերը դանդաղեցին մոտ երկու անգամ, որը բացասաբար ազդեց նրա արտաքին քաղաքականության վրա: Գնալով մեծանում էր արևելաեվրոպական երկրների դժգոհությունը սոցիալիստական հասարակարգի նկատմամբ, որտեղ ձգտում էին ապրել կապիտալիստական և ազատ շուկայական հարաբերությունների չափանիշներով:

Միևնույն ժամանակ 1981-1989 թթ. ամերիկյան տնտեսությունը նոր վերելք ապրեց: 1985 թ. պաշտոնապես հրապարակվեց «Ռեյգանի հայեցակարգը», որը նախատեսում էր նյութական և բարոյական օժանդակության ցուցաբերում «Երրորդ աշխարհի» երկրներին՝ Ասիայում, Աֆրիկայում, Կենտրոնական Ամերիկայում հակակոմունիստական շարժումներ դրսևորող ուժերին: ԱՄՆ-ը աջակցում էր Աֆղանստանի, Անգոլայի, Վիետնամի, Իրանի, Կամպուչյայի, Լաոսի, Լիբանանի, Նիկարագուայի, Եթովպիայի, Լեհաստանի և Վարշավյան պայմանագրի կազմակերպության (ՎՊԿ) երկրների հակակոմունիստական կամ ամերիկամետ ուժերին: Աֆղանստանում, Անգոլայում, Նիկարագուայում ընթանում էր քաղաքացիական պատերազմ, իսկ Լեհաստանում մտցվել էր ռազմական դրություն, սկսվել էին բռնություններ և հետապնդումներ իրականացնել այլախոհների և ընդդիմադիրների նկատմամբ: ԱՄՆ-ը ներխուժեց Գրենադա, ուժեղացրեց միջամտությունը Կենտրոնական Ամերիկայի երկրների ներքին գործերին և այլն[57]: Նոր թափով բռնկվեց սպառազինության մրցավազքը: «Ռեյգանի հայեցակարգը» գործնականում հստակ պայմաններ ստեղծեց խորհրդամետ շատ վարչակարգերի տապալման, «սառը պատերազմի» ավարտի համար և արագացրեց

---

[56] Радио Свобода: Программы: Культура: Атлантический дневник // http://archive.svoboda.org/programs/AD/2000/AD.050900.asp

[57] Ronald Reagan: Public Papers of The Presidents of the United States, book 1, January 1 to june 28, 1985, Washington: USGPO, 1988, p.130-135.

ԽՍՀՄ-ի փլուզումը[58]: Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ին, այդ շրջանում նա ասիական և աֆրիկյան խորհրդամետ ուժերին և վարչակարգերն աջակցում էր հիմնականում սահմանափակվելով քաղաքական խորհրդականներ և ռազմական հրահանգիչներ, մասամբ ռազմական աջակցություն առաքելով:

Աշխարհաքաղաքականության տեսանկյունից արդեն հիշատակված վիետնամական և աֆղանական պատերազմները ափամերձ գոտիների (Ռիմլենդի) համար մղվող բնական պատերազմներ էին: Այստեղ պետք է ընդգծել այն հանգամանքը, որ սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ը կապիտալիստական հասարակարգի իրավունքների պահպանումն ու զարգացումը միահյուսում էր առավել խորքային աշխարհաքաղաքական շահերի հետ, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, որը մարքսիզմ-լենինիզմի, կոմունիստական և դասակարգային պայքարի գաղափարախոսության տեսանկյունից էր առաջնորդվում միջազգային հարաբերություններում և չէր նկատում, որ սոցիալիստական և կապիտալիստական հասարակարգերի հակամարտության կողքին գոյություն ունի ոչ պակաս խորքային աշխարհաքաղաքական հակամարտություն:

Ոչ միայն տնտեսական համեմատական թուլությունն էր այն հիմնական պատճառներից մեկն էր, որ սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը մի տեսակ հանդես էր գալիս կրավորական պաշտպանության դիրքերից՝ գործողությունների նախաձեռնությունը գլխավորապես թողնելով ԱՄՆ-ին, այլև աշխարհաքաղաքական մտածողության և նման երևույթի բացակայությունը և անտեսումը:

Մ. Գորբաչովը պետությունը ճգնաժամից դուրս բերելու համար 1985 թ. հռչակեց «վերակառուցման» քաղաքականություն, որը խնդիր ուներ բարեփոխումների ճանապարհով ապահովելու ժողովրդավարությունը, խորհրդարանականությունը (պառլամենտարիզմ), ազատ շուկայական հարաբերությունները, «հրապարակայնությանը» և մարդու իրավունքները, խղճի ու խոսքի ազատությանը: Այն ապահովելու էր անցումը սոցիալիստականից ժողովրդավարական-կապիտալիստական հասարակարգ: Սակայն «վերևից» հռչակված «վերակառուցումը», ինչպես հայտնի է այդպես էլ չկենսագործվեց: Մ. Գորբաչովը անհաջողություն կրելով ներքաղաքական կյանքում, որոշեց հաջողության հասնել արտաքին քաղաքական բնագավառում: 1987 թ. ԱՄՆ-ի և ԽՍՀՄի միջև կնքվեց պայմանագիր միջին հեռահարության միջուկային

[58] It Was Reagan Who Tore Down That Wall," Dinesh D'Souza, Los Angeles Times, November 7, 2004 // http://articles.latimes.com/2004/nov/07/opinion/oe-dsouza7; î»°ë Ý³¨ **Киссинджер Г.** Дипломатия, (пер. В. В. Верченко), М.: АСТ, 2018, с. 757-766, 796.

հրթիռների ոչնչացման մասին: Շուտով Խորհրդային Միությունը պատրաստակամություն հայտնեց զգալի չափով, քան ԱՄՆ-ն, կրճատել իր ռազմական ներկայությունը եվրոպական երկրներում[59]: Մ. Գորբաչովը ԽՍՀՄ-ի ներքին քաղաքականության և հատկապես տնտեսության մեջ չունենալով հաջողություն (նավթի համաշխարհային գների անկումն ուղեկցվում էր տնտեսական և արդյունաբերական խոր ճգնաժամով), ձգտում էր երկրի ներսում և աշխարհում ճանաչում ձեռք բերել արտաքին քաղաքականության հաշվին: Իսկ դա ստիպում էր նրան միակողմանի լուրջ զիջումներ կատարել: Յուրաքանչյուր վիճելի հարց լուծվում էր այնպես, որ ԽՍՀՄ-ը զիջում էին 80%, իսկ ԱՄՆ՝ 20%[60]: Դրվեց ԽՍՀՄ-ի փլուզման հիմքերը:

Սակայն ՎՊԿ-ի երկրներում և հենց ԽՍՀՄ-ի ներսում Մ. Գարբաչովի և նրա կառավարության քաղաքականությունը շատ դեպքերում ընկալվեց որպես միակողմանի զիջման և թուլության դրսևորում Արևմուտքի նկատմամբ: Հենց այդպես ընկալվեց միջազգային լարվածության թուլացմանը միտված խորհրդային զորքերի դուրսբերումը Աֆղանստանից: 1989 թ. դեկտեմբերի 2-3-ը Մալթայում Ջ. Բուշ ավագի հետ հանդիպման ժամանակ Մ. Գորբաչովը հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը վերջնականապես հրաժարվում է այսպես կոչված «Բրեժնևի հայեցակարգից» և չի միջամտելու Արևելյան Եվրոպայի երկրների ներքին գործերին[61]: Խորհրդային սոցիալիստական համակարգը, այս պայմաններում արագորեն գնում էր դեպի փլուզման: 1989 թ. սկսվեց խորհրդային զորքերի դուրս բերումը ՎՊԿ-ի երկրներից, ինչը այդ պետություններում առաջացրեց հակասոցիալիստական և հակախորհրդային տրամադրություններ: Իշխանափոխություններ և հեղափոխություններ տեղի ունեցան Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Ալբանիայում, Բուլղարիայում, Ռումինիայում: 1991թ. հուլիսի 1-ին ՎՊԿ-ն լուծարվեց: 1990 թ. հոկտեմբերի 3-ին տեղի ունեցավ Գերմանիայի միավորումը:

Մ. Գորբաչովը աստիճանաբար հրաժարվում էր բարեփոխումների սոցիալ-ժողովրդավարական ձևից և անցում էր կատարում ազատական-կապիտալիստական կողմը՝ դրանով փաստորեն ընդունելով խորհրդային համակարգի «սխալականությունը» և ԱՄՆ-ի ու Արևմուտքի պետությունների դեմ պայքարը: Մ.

---

[59] . ( . . . ), .492-501.

[60] Леонтьев М. В., Ýßí., ³ßË., ¿ç 260-262:

[61] Беседы с Бушем. Мальта, 2 декабря 1989 г. // Отвечая на вызов времени. Внешняя политика перестройки: документальные свидетельства, 1989, с. 235.

Գորբաչովի արտաքին քաղաքականությունը նախատեսում էր անցումը երկբևեռ աշխարհակարգից բազմաբևեռի, որտեղ ոչ մի պետություն չէր ձգտի համաշխարհային գերիշխանության՝ սխալմամբ կարծելով, որ դրանով վերջ կդրվի ԽՍՀՄ-Արևմուտք հակամարտությանը:

1989-1991 թթ. ԽՍՀՄ-ի ծայրամասերում առաջացան ազգամիջյան հակասությունների և լարվածությունների ամբողջական օջախներ (այդ թվում Հայաստանի և Ադրբեջանի միջև), որոնք աստիճանաբար վերածվեցին անկախության համար պայքարի կենտրոնների և անմիջական պատճառ հանդիսացան ԽՍՀՄ-ի փլուզման համար:

1991 թ. դեկտեմբերի 8-ին Ռուսաստանը, Ուկրաինան և Բելոռուսը (առանց խորհրդային մյուս միութենական հանրապետությունների մասնակցության) Բելովեժսկում ստորագրեցին համաձայնագիր, որով ԽՍՀՄ-ը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ դադարեց գոյություն ունենալ և ստեղծվեց Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ): Խորհրդային տասնմեկ հանրապետությունների (նաև Հայաստանի) ներկայացուցիչները դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում հաստատեցին և միացան այդ համաձայնագրին[62]:

«Վերակառուցումը» ոչ միայն հրաժարում էր կապիտալիստական աշխարհի հետ գաղափարախոսական պայքարից, այլև լրիվ հակասում էր Ռուսաստանի պատմական աշխարհաքաղաքական շահերից՝ որպես եվրասիական մեծ մայրցամաքային տերության օրինակ (Հարթլենդ): Դա Եվրասիայի փլուզումն էր ներսից, երկկենտրոն աշխարհներից մեկի կամավոր ինքնաչեզոքացում: Եվրասիականության փոխարեն ընդունվեց ատլանտականությունը: ԱՄՆ-ը սկսեց քայլեր ձեռնարկել հետխորհրդային երկրներում ազդեցություն ձեռքբերելու համար: Արևելյան Եվրոպայի երկրները (Ռումինիա, Հունգարիա, Չեխիա, Սլովակիա, Բուլղարիա, Լեհաստան, Սլովենիա, Խորվաթիա) ԽՍՀՄ-ի նախկին հանրապետությունները (Էստոնիա, Լիտվա, Լատվիա) դարձան ՆԱՏՕ-ի անդամ: Աշխարհը դարձավ գլոբալ և միաբևեռ[63]:

Այսպիսով, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի համեմատական վերլուծությունը և դրանց համադրումը ամերիկյան

---

[62] Տե՛ս **Коэн С.** ,Вопрос вопросовե՝ почему не стало Советского Союза? (пер. И. Давидян) М: АИРО XXI, 2011, с 7-106; **Коэн С.** Можно ли было реформировать Советскую систему? / Прорыв к свободе: О перестройке двадцать лет спустя / сборник статей / М.,2005. с. 24-45; **Гайдар Е. Т.,** Гибель империи: уроки для современной России, 2-е изд., М.: РОССПЭН, 2006; **Черняев А. С., Вебер А. Б.** Союз можно было сохранить. Белая книга: Документы и факты о политике М. С. Горбачёва по реформированию и сохранению многонационального государства, 2-е изд., М.: АСТ, 2007.

[63] Дугин А., նշվ. աշխ., էջ 346-347:

աշխարհաքաղաքական գաղափարախոսությունների ու շահերի հետ, ցույց տվեցին, որ ԱՄՆ-ը ծրագրված սցենարային արտաքին քաղաքականությամբ և հետևողական հաջորդականությամբ պայմաններ ստեղծեց ԽՍՀՄ-ի փլուզման և աշխարհի միաբևեռացման համար: Այդ հակամարտությունը ոչ միայն կապիտալիստական հասարակարգի հակադրում էր սոցիալիստականին, այլև այն առավել խորքային՝ աշխարհաքաղաքական հակամարտություն էր, որը խորհրդային իշխանությունները անտեսել և համարել են հակագիտական ու հակատրամաբանական:

Զ. Բժեզինսկին դիպուկ է նկատել. «Խորհրդա-ամերիկյան հակասությունները, ոչ թե ժամանակավոր շեղում էին, այլ պատմականորեն ձևավորված և ապագայում շարունակվող երկարաժամկետ առճակատում. այս մրցակցությունն ունի գլոբալ բնույթ և սա պայքար է երկու կայսրությունների միջև: Այս ձևակերպումը համադրելի է նաև ժամանակակից ռուս-ամերիկյան հարաբերություններին: 1999 թ. նույն Զ. Բժեզինսկին հայտարարել է. «ԱՄՆ-ի գլխավորությամբ նոր աշխարհակարգը ստեղծվում է Ռուսաստանի դեմ, Ռուսաստանի հաշվին և Ռուսաստանի ավերակների վրա, որտեղ Ուկրաինան հանդիսանալու է առաջապահ ուղեկալ», ըստ նրա. «Կոմունիզմի վերջը դրվել է, առջևում ուղղափառությունն է»[64]: ԱՄՆ-ի պայքարը Ռուսաստանի դեմ ունի նաև մշակութային ու կրոնական (քաղաքակրթական) ենթատեքստ, որի մասին գրել է Ս. Հանթինգտոնը[65]:

Ս. Կոենը գտնում է, որ ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև արդեն սկսվել է նոր «սառը պատերազմ», որի նախանշանները այժմ (2014 թ.) նկատվում են Եվրոպայում: Այդ բաժանումը տեղի է ունենում այս անգամ, ոչ թե Բեռլինում, այլ Ռուսաստանի սահմանին: Պետք է սպասել վատթարագույնին, եթե ՆԱՏՕ-ի ուժերը տեղակայվեն Ուկրաինայի արևմուտքում կամ լեհ-ուկրաինական սահմանին: Դրան ի պատասխան Մոսկվան իր զինված ուժերը կենտրոնացնի Արևելյան Ուկրաինայում: Արդյունքում կստեղծվի այն սպառնալիքը, որը համեմատելի է 1962 թ. Կարիբյան ճգնաժամի հետ[66]:

ԽՍՀՄ-ի տնտեսական թուլությունը, բռնապետական, միակուսակցական համակարգը, որտեղ ներքին ու արտաքին քաղաքականության մեջ առաջնորդվում էին գլխավորապես մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, պետություն, որտեղ անտեսված էին ազգերի ու միութենական հանրապետությունների ազգային, կրոնական, տարածքային

---

[64] Аналитическая передача "Однако" с Михаилом Леонтьевым / http://www.1tv.ru/news/leontiev/ 190368

[65] Хантингтон С., նշվ. աշխ., էջ 379-384:

[66] **Коэн С.:** Снова холодная война. Кто виноват? // http://www.novayagazeta.ru/comments/63044.html; տե՛ս նաև **Коэн С.** Кто перешел красную линию? // http://www.rg.ru/2014/03/14/koen.html

շահերն ու առանձնահատկությունները[67], բնականաբար երկրի ներսում առաջացրին ճգնաժամ, որն էլ իր հերթին նպաստեց ԽՍՀՄ-ի փլուզմանը: Դա նշանակում է, որ ԽՍՀՄ-ի փլուզումը նաև այն ներկայացնող ազգերի ժողովուրդների քաղաքակրթական հակասության և անընդհանրության արդյունք էր: Սա եկավ հաստատելու «զսպման» հայեցակարգի հեղինակ Ջ. Քենանի կանխատեսումը, արված դեռևս 1951 թ., ըստ որի ԽՍՀՄ-ի փլուզումը լինելու է ներքին գործընթացի արդյունք:

Այսպիսով, ԽՍՀՄ-ի գոյության փաստը մեծապես պայմաններ ստեղծեց «սառըպատերազմյան» ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ձևավորման վրա, նրանց համար դարձավ կողմնորոշիչ և միջազգային իրավիճակին համապատասխան ապահովեց նրանց սահուն հաջորդականությունը «զսպման» և «Թրումենի հայեցակարգից» մինչև «Ռեյգանի հայեցակարգ»: Նրանց ծրագրավորված սցենարային քաղաքականությունը հող նախապատրաստեց ԽՍՀՄ-ի փլուզման ու «սառը պատերազմում» ԱՄՆ-ի հաղթանակի համար:

[67] Хантингтон С., նշվ. աշխ., էջ 305-306:

## Եզրակացություն*

Հետազոտելով սառը պատերազմի ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերը և նրանց դերը ու նշանակությունը ԽՍՀՄ-ի հետ փոխհարաբերություններում՝ կատարում ենք հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Հետազոտության մեջ շեշտադրումն դնելով ԱՄՆ-ի հայեցակարգային (դոկտրինա) քաղաքականության վրա կարևոր ենք համարել տալ նրա ձևակերպումը.

*Արտաքին քաղաքականության հայեցակարգը պետության նպատակների, մտադրությունների ու գործողությունների միասնական համակարգ է, ռազմավարություն, որ էականորեն հստակեցնում է երկրի շահերի պաշտպանությունը կամ արտաքին քաղաքականության ուղղեգիծը միջազգային ու միջպետական հարաբերություններում:*

2. Ջ. Քենանի «Երկար նամակը» շատ կողմերով կողմնորոշիչ եղավ ԽՍՀՄ-ի հետ ԱՄՆ-ի հարաբերություններում և բարձրացվեց հայեցակարգի աստիճանի: Այսպես ուրվագծվեց ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը սառը պատերազմում, այն է՝ թուլացնել և հնարավորության դեպքում կազմալուծել ԽՍՀՄ-ը: Այս մոտեցմամբ ԱՄՆ-ը, որպես գերհզոր տերություն, բնականաբար, խնդիր ուներ միջազգային ասպարեզում հաստատել իր մենիշխանությունը:

3. «Թրումենի հայեցակարգը» դարձավ միջազգային հարաբերությունների նոր սկիզբը, այն բխում էր «զսպման» ռազմավարությունից և խնդիր ուներ ապահովել ԱՄՆ-ի քաղաքական և տնտեսական ազդեցությունը այն երկրներում, որոնց ուղղված էր այդ օգնությունը:

4. ԽՍՀՄ-ը վճռականորեն հրաժարվեց ընդունել «Մարշալի պլանը»՝ այն համարելով պետությունների ինքնավարության կորստի ծրագիր: ԽՍՀՄ-ի ճնշման տակ Արևելաեվրոպական երկրները ստիպված եղան հրաժարվել «Մարշալի պլանից»: Խորհրդային կառավարությունը «Մարշալի պլանից» հրաժարվելը մեկնաբանում էր նաև նրանով, որ ամերիկացիները դրանով հետապնդում են «զսպման» դրույթի և «Թրումենի հայեցակարգի» սկզբունքները, որոնք ընդունվել են ընդդեմ ԽՍՀՄ-ի և նպատակ են հետապնդում ճնշել ժողովրդական ելույթները Արևելյան Եվրոպայի երկրներում և ամրապնդել ԱՄՆ-ի իշխանությունը տարածաշրջանի պետությունների

---

** Համաձայն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի» այս թեմայից օգտվելուց կամ քաղվածքներ կատարելուց հեղինակի՝ է. Նավոյանի անունը և գիտական հոդվածի վերնագրի նշումը՝ հղումը, պարտադիր է:*

վրա և թույլ չտալ վերջիններիս որևէ հարաբերություններ ունենալ Խորհրդային Միության հետ:

5. Ռուս հետազոտող Մ. Նարինսկու կարծիքով խորհրդային կառավարության որոշումը՝ հրաժարվել «Մարշալի պլանից», եղել է սխալ: Սակայն ըստ նրա, եթե ԽՍՀՄ-ը ձգտում էր իր ազդեցությունը տարածել Արևելյան Եվրոպայի պետությունների վրա և բացառել Արևմուտքի ու հատկապես ԱՄՆ-ի ազդեցության տարածումն այդ տարածաշրջանի վրա, ապա հրաժարումը «Մարշալի պլանից» այնքան էլ «անմտածված չէր»: Մ. Նարինսկին այստեղ հակասել է ինքն իրեն, իսկ «Մարշալի պլանի» նպատակների վերլուծության առումով՝ որոշակի «շտապողականություն»: Գրեթե նմանօրինակ մոտեցում ունեն պատմաբաններ Վ. Զուբոկը և Կ. Պլեշակովը: Նրանք իրենց համատեղ գրքում գտնում են, որ հեռանալով Փարիզի խորդաժողովից Վ. Մոլոտովը բռնեց պարտության ուղին: Նրանք գտնում են, որ եթե Վ. Մոլոտովը մնար, կկարողանար սակարկել, տնտեսական գործարք կնքել կամ հասնել նրան, որ ԱՄՆ Կոնգրեսում «Մարշալի պլանը» տապալվի: Բայց ըստ Վ. Զուբոկի և Կ. Պլեշակովի, Ի. Ստալինը և Վ. Մոլոտովը վարեցին աղետալի, ձախողակ քաղաքականություն: Վ. Զուբոկի և Կ. Պլեշակովի մոտեցումը միակողմանի է, նրանք անտեսել են ակնհայտ փաստերը և հիմնվել են ենթադրական վերլուծության վրա, քանի որ ամերիկյան կողմը նույնպես կարող էր սակարկել և աստիճանաբար «Մարշալի պլանի» իրագործման ընթացքում իր տրամադրած վարկերի, օգնության և ապրանքների համար պահանջարկ ստեղծեր խորհրդային շուկայում ու առաջ քաշեր քաղաքական, տնտեսական պահանջներ՝ սպառնալով առաջացնել տնտեսական փլուզում (կոլապս): Նրանք մոռանում են, կապիտալիստական և կոմունիստական հասարակարգերի անհամատեղելիությունը, որ 1946 թ. պաշտոնապես մեկնարկել էր «սառը պատերազմը», 1947 թ. հրապարակվել էին «զսպման» հայեցակարգը, «Թրումենի հայեցակարգը», առկա էին նաև միջուկային հարվածի և «դոլարի դիվանագիտության» սպառնալիքները: 1946 թ. սկսվել էր Չինաստանի քաղաքացիական պատերազմը, որտեղ չանկայշիական վարչակարգը աջակցություն էր ստանում ԱՄՆ-ից, իսկ կոմունիստները՝ ԽՍՀՄ-ից, 1948 թ. մարտի 17-ին Բրյուսելում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բենիլյուքսը ստորագրվել էին համատեղ ռազմական պաշտպանության համաձայնագիր, որը հակասում էր Յալթայի և Պոտսդամի վեհաժողովներում ձեռք բերված միջազգային համատեղ անվտանգության համաձայնագրին և ռազմական առումով անմիջականորեն հակադրվում էր ԽՍՀՄ-ին: Գերմանական հարցում

լարվածությունը հասել էր իր գագաթնակետին՝ 1948 թ. հունիսի 21-ին, այսինքն՝ Փարիզի վեհաժողովից մեկ շաբաթ առաջ, սկսվել էր Բեռլինի շրջափակումը և այլն: Եվ ուրեմն ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը արդեն աշխարհաքաղաքական հակառակորդներ էին: Մ. Նարինսկու, Վ. Զուբոկի, Կ. Պլեշակովի և այլոց սխալներից մեկն էլ այն է, որ նրանք «Մարշալի պլանը» տեսնում է միայն 1948-1951 թթ. ժամանակահատվածի մեջ, որը հետապնդում է միայն կարճաժամկետ նպատակ, այլ ոչ թե մի ծրագիր, որը կազմակերպեց ԱՄՆ-ի հատկապես տնտեսական արտաքին քաղաքականությունը սառըպատերազմյան և հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում: Վերոհիշյալ ուսումնասիրողները հաշվի չեն առել նաև անգլո-ամերիկյան աշխարհաքաղաքականության հայտնի տեսաբանների և հատկապես՝ Հ. Մակքինդերի, Ա. Մեխենի, Ն. Սպայկմենի և այլոց հայացքները, որոնք գործնականում դրվեցին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի և ծրագրերի հիմքում և իրենց սուր ծայրով ուղղված էին ԽՍՀՄ-ի դեմ: Նրանք անտեսել են 1948 թ. հրապարակված ԱՄՆ-ի ԱԱԽ-ի 20/1 հուշագիրը («Դալլեսի պլանը»), 1950 թ.՝ ԱԱԽ-ի 68-րդ բանաձևը և այն հանգամանքը, անկախ ԽՍՀՄ-ի հասարակական-քաղաքական կառուցվածքից, այն ԱՄՆ-ի համար հանդիսացել է աշխարհաքաղաքական հակառակորդ: Չի բացառվում, որ ԽՍՀՄ-ը, ընդունելով «Մարշալի պլանը», շատ ավելի վաղ կգնար փլուզման, քանի որ նա պետք է հրաժարվեր Արևելյան Եվրոպայի հանդեպ ունեցած ազդեցությունից, որը հավասարազոր կլիներ սոցիալիստական համակարգի փլուզմանը: ԽՍՀՄ-ը իր տնտեսաֆինանսական, հասարակական-քաղաքական կյանքը, ռազմական արդյունաբերությունը պետք է դներ ԱՄՆ-ի վերահսկողության տակ:

Խորհրդային կառավարության քաղաքականությունը կարող էր քննադատության ենթարկվել միայն այն դեպքում, եթե ԽՍՀՄ-ը լիներ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կամ նույնիսկ Ճապոնիայի պես կապիտալիստական երկիր և չլիներ երկբևեռ աշխարհում ծանրության կենտրոններից մեկը: Այնուամենայնիվ «Մարշալի պլանը» և նրա սկզբունքները առավել համակրելի և հեռանկարային էր Եվրոպական 16, իսկ հետո նաև աշխարհի զգալի մասի համար, քան ամբողջատիրական ԽՍՀՄ-ը և նրա ՏՓԽ-ն, որը Արևելյան Եվրոպայում պետք է հակադրվեր «Մարշալի պլանին»:

6. 1950-ական թթ. հիմնականում ձևավորվեց երկու հակառակ համակարգերի աշխարհաքաղաքական պատկերը, որը Հ. Մակքինդերի նախագծած ցամաքային քաղաքակրթության (Հարթլենդի) աշխահրաքաղաքական քարտեզի գործնական արտահայտությունն էր: Նրա Հարթլենդը և ցամաքային քաղաքակրթությունը

արտահայտված էր ԽՍՀՄ-ի, Վարշավյան պայմանագրի երկրների, սոցիալիստական վարչակարգերի միասնության տեսքով: Խորհրդային Միությունը վերածվեց Եվրասիական հզոր տերության:

7. Արաբական Արևելքում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև պայքարի սաստկացումը անխուսափելիորեն նոր բաժանարար գծեր էր ստեղծում տարածաշրջանում: Այն հիմնականում կենտրոնանալով արաբա-իսրայելական հակամարտության շուրջ՝ իր հերթին աստիճանաբար ձևավորեց երկու հակադիր ճամբարներ, որոնցից մեկը ընդգրկում էր ԽՍՀՄ-ը և «ազգայնական» վարչակարգեր ունեցող Եգիպտոսը, Սիրիան և Իրաքը (1958 թ-ից), իսկ մյուսը՝ ԱՄՆ-ը, Իսրայելը և ամերիկամետ արաբական միապետությունները Հորդանան, Սաուդյան Արաբիա, Քուվեյթ և այլն:

1950-ական թթ. երկրորդ կեսին Մերձավոր Արևելքի երկրներում տեղի ունեցած դեպքերը ոչ թե սպառել էին «էյզենհաուերի հայեցակարգի» գործունեությունը, այլ ժամանակավորապես, մինչև «Քարթերի հայեցակարգի» հրապարակումը, սահմանափակել էին «էյզենհաուերի հայեցակարգի» գործունեության աշխարհագրական միջավայրը: Խորհրդա-աֆղանական պատերազմը հնարավորություն տվեց ԱՄՆ-ին համեմատական առումով ուղղել իրավիճակը Մերձավոր և Միջին Արևելքում և մահմեդական աշխարհը տրամադրել ԽՍՀՄ-ի դեմ:

8. Աշխարհաքաղաքականության տեսանկյունից Կարիբյան ճգնաժամը մայրցամաքների միջև հակամարտությունը հասցրեց այնպիսի լարվածության, որ միջուկային պատերազմը դարձավ առավել հավանական: Այդ ճգնաժամը աշխարհաքաղաքական և տարածքային ազդեցության առումով նշանակում էր ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև ուժային հավասարակշռության խախտում: Պայքարը ցամաքային տարածաշրջանից անցնում էր ծովային (կղզային) տարածաշրջան և այդ առումով Կուբայական հեղափոխությունից և ճգնաժամից հետո օրինաչափ էին Ջ. Քենեդիի, Լ. Ջոնսոնի, Ջ. Ֆորդի հայեցակարգերը, որոնք միտված էին «զսպելու» և կանխարգելելու կոմունիստական ազդեցության տարածումը ծովային, այն է՝ Ատլանտյան և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Դրանով կրկնվեց «Մոնրոյի հայեցակարգի» (1823 թ) և «Մաշալի պլանի» սկզբունքները տեղի պետություններում խորհրդամետ վարչակարգերի հաստատմանը կանխարգելելու համար:

9. 1968 թ. նոյեմբերին ԽՍՀՄ-ի ԽՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևը Լեհաստանի Աշխատավորական միասնական կուսակցության 5-րդ նստաշրջանում հրապարակեց սոցիալիստական պետությունների հանդեպ ԽՍՀՄ արտաքին

քաղաքականության հիմնական ուղղությունը: Այն «իրավունք էր տալիս» վերջինին զորքով միջամտել սոցիալիստական ճամբարի մաս կազմող Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների ներքին գործերին, որպեսզի ապահովեր սոցիալիստական քաղաքական ուղղու կայուն զարգացումը և ԽՍՀՄ-ի հետ այդ երկրների սերտ համագործակցությունը (այս քաղաքականությունը որակվեց որպես «Բրեժնևի հայեցակարգ» կամ «ինքնիշխանության սահմանափակման հայեցակարգ»): Այսօրինակ քաղաքականությունը հնարավորություն տվեց ԽՍՀՄ-ին ճնշելու 1968 թ. Չեխոսլովակիայի և 1981-1983 թթ. Լեհաստանի հակասոցիալիստական համարվող շարժումները: Այն պայմանավորեց ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքական կուրսը 1960-1980-ական թթ.: Սակայն ամբողջությամբ կյանքի չկոչվեց. Չինաստանը և Հարավսլավիան, Ալբանիան, Ռումինիան ունեին անկախ դիրքորոշում: Սոցիալիստական աշխարհում աճող ճգնաժամը գնալով ավելի ակնհայտ էր դառնում

10. Հայտնի հետազոտող Դ. Երգինը գրում է, որ «Թրումենի», «էյզենհաուերի» և «Նիքսոնի» (Վիետնամականացման կամ Գուամի) հայեցակարգերը պայմաններ են ստեղծել հետագայում «Քարթերի հայեցակարգի» համար: «Թրումենի դոկտրինայում» ասվում էր, որ ԱՄՆ-ը ռազմական օժանդակություն կցուցաբերի այն երկրներին, որոնք կգտնվեն խորհրդային սպառնալիքի տակ: «Քարթերի հայեցակարգում» այդ նախադասությունը օգտագործվեց Իրանի և Սաուդյան Արաբիայի անվտանգությունը ապահովելու տեսքով: «էյզենհաուերի հայեցակարգը» իր հերթին ամերիկյան զորքերը ուղարկել էր Մերձավոր Արևելք իր դաշնակիցներին խորհրդամետ ուժերից պաշտպանելու և Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հեռանալուց հետո տարածաշրջանում առաջացած «վակուումը» լցնելու համար: Իսկ «Նիքսոնի հայեցակարգը» ռազմական օժանդակություն էր նախատեսում նաև Իրանին և Սաուդյան Արաբիային, որպեսզի վերջիններս առանց ԱՄՆ-ի կարողանային ապահովել տարածաշրջանի խաղաղությունը և կայունությունը:

11. ԽՍՀՄ-ին «զսպելու» պատրվակով «Քարթերի» և «Նիքսոնի» դրույթները, եկան պաշտպանելու «Թրումենի» և «էյզենհաուերի» հայեցակարգերի գործունեության արդյունքում ձեռք բերված աշխարհաքաղաքական արդյունքները, բնականաբար իրենց մեջ կրելով նաև այդ հայեցակարգերի սկզբունքային տարրերը:

13. 1945-1985 թթ. ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը հիմնականում մնացել է անփոփոխ: Սակայն սպառազինության մրցավազքը սպառում էր ԽՍՀՄ-ի տնտեսությունը: Գնալով մեծանում էր արևելաեվրոպական երկրների դժգոհությունը

սոցիալիստական հասարակարգի նկատմամբ, որտեղ ձգտում էին ապրել կապիտալիստական և ազատ շուկայական հարաբերությունների չափանիշներով:

14. Աշխարհաքաղաքականության տեսանկյունից արդեն հիշատակված վիետնամական և աֆղանական պատերազմները ափամերձ գոտիների (Ռիմլենդի) համար մղվող բնական պատերազմներ էին: Այստեղ պետք է ընդգծել այն հանգամանքը, որ սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ը կապիտալիստական հասարակարգի իրավունքների պահպանումն ու զարգացումը միահյուսում էր առավել խորքային աշխարհաքաղաքական շահերի հետ, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, որը մարքսիզմ-լենինիզմի, կոմունիստական և դասակարգային պայքարի գաղափարախոսության տեսանկյունից էր առաջնորդվում միջազգային հարաբերություններում և չէր նկատում, որ սոցիալիստական և կապիտալիստական հասարակարգերի հակամարտության կողքին գոյություն ունի ոչ պակաս խորքային աշխարհաքաղաքական հակամարտություն:

Ոչ միայն տնտեսական համեմատական թուլությունն էր այն հիմնական պատճառներից մեկն էր, որ սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը մի տեսակ հանդես էր գալիս կրավորական պաշտպանության դիրքերից՝ գործողությունների նախաձեռնությունը գլխավորապես թողնելով ԱՄՆ-ին, այլև աշխարհաքաղաքական մտածողության և նման երևույթի բացակայությունը և անտեսումը:

15. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի համեմատական վերլուծությունը և դրանց համադրումը ամերիկյան աշխարհաքաղաքական գաղափարախոսությունների ու շահերի հետ, ցույց տվեցին, որ ԱՄՆ-ը ծրագրված սցենարային արտաքին քաղաքականությամբ և հետևողական հաջորդականությամբ պայմաններ ստեղծեց ԽՍՀՄ-ի փլուզման և աշխարհի միաբևեռացման համար: Այդ հակամարտությունը ոչ միայն կապիտալիստական հասարակարգի հակադրում էր սոցիալիստականին, այլև այն առավել խորքային՝ աշխարհաքաղաքական հակամարտություն էր, որը խորհրդային իշխանությունները անտեսել և համարել են հակագիտական ու հակատրամաբանական:

16. ԽՍՀՄ-ի գոյության փաստը մեծապես պայմաններ ստեղծեց «սառըպատերազմյան» ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ձևավորման վրա, նրանց համար դարձավ կողմնորոշիչ և միջազգային իրավիճակին համապատասխան ապահովեց նրանց սահուն հաջորդականությունը «զսպման» և «Թրումենի հայեցակարգից» մինչև «Ռեյգանի հայեցակարգ»: Նրանց

ծրագրավորված սցենարային քաղաքականությունը հող նախապատրաստեց ԽՍՀՄ-ի փլուզման ու սառը պատերազմում ԱՄՆ-ի հաղթանակի համար:

## Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

### 1. Սկզբնաղբյուրներ և փաստաթղթերի ժողովածուներ

**ա) անգլերեն**


1. Foreign relations of the United States 1977–1980 (ed. Howard A. M., Ahlberg K. L.). Foundations of Foreign Policy, V. I, Washington: US GPO, 2014.
2. Public Papers of the Presidents of The United States. Harry S. Truman: Containing the Public Messages, Speeches, and Statements of the President, January 1 to December 31, I947, Washington: USGPO, I963.
3. Public papers of the presidents of the US Dwight D. Eisenhower (by D. Eisenhower), Containing the Public Messages, Speeches and Statements of the President, January 1 to December 31, 1957, Washington, US GPO, 1957.
4. Public Law 85-7 Joint resolution to promote peace and stability in the Middle East. 117 (85th). Mar 9, 1957 // https://www.govtrack.us/congress/bills/85/hjres117/text
5. Ronald Reagan: Public Papers of The Presidents of the United States, book 1, January 1 to june 28, 1985, Washington: USGPO, 1988.
6. 'The sources of Soviet conduct' from Foreign Affairs (July 1947) p. 6-10 // https://www.cvce.eu/content/publication/1999/1/1/a0f03730-dde8-4f06-a6ed-d740770dc423/publishable_en.pdf
7. The "Marshall Plan" speech at Harvard University, 5 June 1947 // http://www.oecd.org/general/themarshallplanspeechatharvarduniversity5june1947.htm


**բ) ռուսերեն**


1. Беседы с Бушем. Мальта, 2 декабря 1989 г. // Отвечая на вызов времени. Внешняя политика перестройки: документальные свидетельства, 1989.
2. Брежнев Л. И. Ленинским курсом, т. II. М.: Политическая литература, 1970.
3. Внешняя политика США. Хрестоматия (сост. Д. В. Кузнецов), Благовещенск: БГПУ, 2014.
4. Внешняя политика Советского Союза, 1948 год: Документы и материалы. ч. 1, М.: Госполитиздат, 1950.
5. Внешняя политика Советского Союза, 1947 год: Документы и материалы, ч. 2, М.: Госполитиздат, 1952.
6. Телеграмма посла СССР в США Н. В. Новикова министру иностранных дел СССР В. М. Молотову от 9 июня 1947 г. // Международная жизнь. 1992, № 5.


### 2. Գիտական աշխատություններ և մենագրություններ

**ա) անգլերեն**


1. Brzezinski Z. Power and Principle: Memoirs of the National Security Adviser, 1977-1981, NY: Farrar Straus & Giroux, 1983.
2. De Long J. B., Eichengreen B. The Marshall Plan: History's Most Successful Structural Adjustment Program, Harvard University, University of California at Berkeley, 1991.
3. Mackinder J. H. Democratic Ideals and Reality, Washington: NDU, 1996.
4. Spykman N. America's Strategy in World Politics: The United States and the Balance of Power, N.Y., Harcourt, Brace and Company, 1942.

5. Wilson T. A. The Marshall Plan 1947-1951, ‚Headline Series 236‚, June 1977.
6. Zubok V., Pleshakov C. Inside the Kremlin's Cold War. From Stalin to Krushchev. Cambridge, 1996.

բ) ռուսերեն

1. Бжезинский З. Великая шахматная доска: Америка и его геостратегические императивы, М.: ИМО, 2005.
2. Внешняя политика США. Хрестоматия (сост. Д. В. Кузнецов), Благовещенск: БГПУ, 2014.
3. Гайдар Е. Т., Гибель империи: уроки для современной России, 2-е изд., М.: РОССПЭН, 2006.
4. Дугин А. ‚Геополитика России‚, М.: Академический проект, 2012.
5. Ергин Д. Добыча. Всемирная история борьбы за нефть, деньги и власть, М.: АП, 2018
6. Зубок В. М., Неудавшаяся империя: Советский Союз в холодной войне от Сталина до Горбачева, М.: РОССПЭН, 2011.
7. История США (глав. ред. Г. Н. Севостьянов), т. 4, М.: ‚НАУКА‚, 1987.
8. История внешней политики СССР 1945-1980 гг. (под. ред. А. А. Громыко), т. 2, М.: Наука, 1981.
9. Каплан Р. Месть географии. Что могут рассказать географические карты о грядущих конфликтах и битве против неизбежного. М.: Коибти, 2016.
10. Кеннан Дж., Дипломатия Второй мировой войны: глазами американского посла в СССР Джорджа Кеннана (пер. с англ. Л.А. Игоревского, Ю.Д. Чупрова), М.: Центрполиграф, 2002.
11. Киссинджер Г. Дипломатия, (пер. В. В. Верченко), М.: АСТ, 2018.
12. Коэн С. ‚Вопрос вопросов‚: почему не стало Советского Союза? (пер. И. Давидян) М: АИРО XXI, 2011.
13. Леонтьев М. В., Большая Игра. Британская империя против России и СССР, М.: Астрель, 2012.
14. Мэхэн А. Влияние морской силы на историю 1660-1783, М.: АСТ, 2002.
15. Романова Е. В., Капитонова Н. К. История внешней политики Великобритании. М. ‚Международные отношения‚, 2020.
16. Наринский М. М., СССР и план Маршалла. Холодная война. Новые подходы. Новые документы. М., 1995.
17. Наринский М. М. Нарастание конфронтации: план Маршалла, Берлинский кризис // Советское общество: возникновение, развитие, исторический финал, т. 2. М., 1997.
18. Стариков Н. В. Национализация рубля – путь к свободе России, СПб.: Питер 2011.
19. Судоплатов П. А., Спецоперации. Лубянка и Кремль 1930-1950 гг., М.: ОЛМА, 1997.
20. Уткин А. И. Мировая холодная война, М.: Эксмо, 2005.
21. Хантингтон С. Столкновение цивилизаций, М.: АСТ, 2007.

գ) հայերեն

1. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Ե., «Զանգակ 97», 2006:
2. Բորիսով Վ., Վասյուտովիչ Պ., Ֆարամազյան Ռ. և ուրիշներ, Միլիտարիզմ. Թվեր և փաստեր, Ե., «Հայաստան» 1987:
3. Իվանյան Է., Սպիտակ տուն. պրեզիդենտներ և քաղաքականություն, Ե., «Հայաստան», 1979:
4. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., ԵՊՀՀ, 2003:

5. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Ե., «Զանգակ 97», 2006:
6. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. IV, Ե., «Զանգակ 97», 2007:
7. Ջելեպի Է., Ջերչիլի գաղտնիքը, Ե., «Հայաստան», 1977:

## 3. Հոդվածներ և հրապարակումներ

### ա) անգլերեն

1. It Was Reagan Who Tore Down That Wall," Dinesh D'Souza, Los Angeles Times, November 7, 2004 // http://articles.latimes.com/2004/nov/07/opinion/oe-dsouza7

### բ) ռուսերեն

1. Бокарев Ю.П. Еще раз об отношении СССР к плану Маршалла//Отечественная история, 2005. № 1.
2. Кеннан Дж. Ф. ,Америка и русское будущееѣ / Новая и новейшая история, 2001,№ 3.
3. Коэн С. Можно ли было реформировать Советскую систему? / Прорыв к свободе: О перестройке двадцать лет спустя / сборник статей / М. 2005.
4. Наринский М. М. СССР и План Маршалла. По материалам Архива президента РФ // Новая и новейшая история. 1993. № 2.
5. Полынов М.Ф. Холодная война как способ борьбы США против СССР // Общество. Среда. Развитие (Terra Humana), № 3.

### գ) հայերեն

1. Նավոյան Է., «Մարշալի պլանը» և «դոլարային դիվանագիտությունը», «Լրատու», Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2013, թիվ 1 (14):
2. Նավոյան Է., «Էյզենհաուերի հայեցակարգը» որպես «Մարշալի պլանի» կզբունքների շարունակություն, «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատ., 2013, թիվ 1 (54):

## 4. Ինտերնետային աղբյուրներ

1. Баранец В. Как СССР строил военные базы за рубежом // http://www.kp.ru/daily/25728.5/2718781/
2. Военные базы СССР и России за рубежом / http://www.agentura.ru/infrastructure/bases/russbases/
3. Наринский М. М. Нарастание конфронтации: план Маршалла, Берлинский кризис / http://you1917 91.narod.ru/narinskiy_narast.html
4. План Маршалла // https://oboguev.livejournal.com/1509158.html
5. Радио Свобода: Программы: Культура: Атлантический дневник // http://archive.svoboda.org/programs/AD/2000/AD.050900.asp
Тириар Ж. Евро-советская империя // https://www.gumer.info/bibli